Unfortunately, the second half of the film, following Nazaret's search for his daughters, is considerably weaker than the first. While there are moving moments to be found, one senses the scope of the film growing increasingly narrow. The story gradually becomes more and more a tale of one man's determination to find his children, a tribute to the spirit of a strong-willed individual up against tremendous odds. The genocide and its meaning drift more and more into the background.

Akin is perhaps overwhelmed by the history involved and the scale of the horror produced during the genocide. He has tried to include a

great deal in his film, but he also passes over too much too quickly. The fate of Armenian survivors across the world, their experience as immigrants in new and different countries is a worthwhile and interesting theme. But these later sequences, in which Nazaret travels from country to country, don't carry the weight of the events in the film's first half. Here one tends to feel as if one were peering at an historical event through a keyhole. Too much is left out.

Many of the more interesting threads from the film's first half are also left dangling. Nazaret had earlier expressed his anger over the gap between the rich and workers like himself. Nothing comes of it; yet it is a central question. What was lurking behind the brutality of Turkish nationalism and behind the First World War itself? What forces and social pressures set all of this into motion? Why, in other words, did all of this happen? The questions one is left with at the end are those the filmmakers did not themselves begin to address.

In the end, behind Akin's epic of the Armenian Genocide, there is just too much conventional thinking and storytelling.

Hrant Dink Murder Trial Takes New Turn

Continued from page 1

gator of the assassination and the "leader of a terrorist organization." Hayal and other suspects, such as Erhan Tuncel and Ersin Yolcu, are also being retried.

The triggerman Ogün Samast, who was sentenced to 22 years by a children's court, is also likely to be tried on new charges, as the court ruled to associate his case with the main murder trial. Samast was only 17-years-old when he shot Dink in front of his office in Istanbul on Jan. 19, 2007.

However, lawyers have also been wary of the Supreme Court verdict, as it defined the aim of the murder as a "political act," rather than an act of terrorism, as they have claimed that an armed terror organization was behind the killing. For a murder to be considered a "terrorist act," it would have to be committed with a clear aim against the state of the public order, according to the Turkish Penal Code.

Lawyers previously said they would try to prove that the activities of the organization went beyond the as-

sassination of Dink.

The ruling comes only a few days after the Justice Ministry cleared the path for investigations into nine civil servants, including senior police officers occupying key posts at the time of the murder, such as the former Istanbul police chief Celalettin Cerrah. The officers had been accused of negligence and threatening Dink before his death.

The Friends of Hrant Dink Association hailed the decision in a statement issued in front of the Istanbul courthouse Oct. 30, while demanding that the civil servants be charged with "murder."

Dink's lawyers have long been demanded that the investigation should focus on the "real web of connections" that led to Dink's murder, while expressing few expectations from the retrial.

The matter was even subject to a review by Turkey's Constitutional Court, which ruled that the case had not been efficiently investigated and the rights of Dink's family were violated.

www.massisweekly.com

Updated every Friday

100km Tribute to Benefit Research on Armenian Architecture



GLENDALE, CA – Organizers announced that Research on Armenian Architecture's (RAA) new, 36-volume series will receive the funds raised by the 100km Walk/Ride. The first book sponsored will cover the region of Mogs.

If larger sums are raised, then the Khnoos and Kghee volumes will be funded. Each book costs approximately \$30,000 to prepare and publish.

"This series of books will present the photographs, documentation, and research compiled over 41 years of work," said Jora Manoucherian, U.S. president of RAA. "We will cover every region of Armenia, whether or not currently under Armenian governance, to fully present the richness of our architectural heritage. Each book will be published separately in Armenian,

English, and Russian."

Details are available on RAA's website, http://www.raa-am.com/36_hator/36%20hator_En.pdf.

The Tribute involves participants walking, bicycling, or motorcycling 100km on Thanksgiving weekend to honor those who perished in the Genocide. Participants will raise funds through sponsorships.

To prepare for the walking portion, Armenian Hikers Association (AHA) is organizing a hike each Sunday on the various legs of the journey. If you would like to join these hikes, details are available on the AHA Facebook page.

Anyone interested in participating or following developments about the Tribute is encouraged to visit:

<http://100kmtribute.com/>

Glendale City Council Unanimously Approves

Continued from page 1

communication from the Armenian Genocide Memorial Council of Glendale, expressing their willingness to join the efforts of the AGCC, and to have the area reserved for the monument included in the ground lease negotiations.

The report presented to the City Council by City Manager Scott Ochoa and Director of Economic Development Philip Lanzafame, indicates that the museum and education center, is scheduled to include exhibit a theater, galleries, research space, classrooms, an outdoor plaza, and a memorial.

In his remarks, Mr. Lanzafame stated, "The elements and size of the proposed museum and education center will be further defined by the research, discussions, and reports that would occur during the term of the exclusive negotiating period."

Although the term of the exclusive negotiating period is 12 months, the AGCC spokespersons expressed their desire to make sufficient progress by April 2015, to unveil the conceptual design for the Museum complex, and construct an interim memorial on the site by the 100th Anniversary of the Armenian Genocide.

Armenia Fund Kicks Off Telethon 2014

Continued from page 1

the way, 16 bridges have been replaced or reconstructed and loose soil and riverbanks have been reinforced to prevent against erosion. Two layers of asphalt have been poured over the first nine miles of road."

Integral to economic development and security, the Vardenis-Martakert highway will increase trade by promoting the free flow of goods, allowing for greater trade with Russia and Georgia. This less curvy scenic road into and out of Artsakh will also encourage tourism which will benefit the areas around it. Kotanjian states that the road will pay for itself quickly, saying the "Goris-Stepanakert highway cost about \$11 million but foreign

tourists have spent almost \$45 million in the areas served by it since the road was opened."

Anranig Baghdassarian, chairman of Armenia Fund, spoke plainly: "Each one of us has a responsibility for our homeland's security." It was in this vein that Armenia Fund was created 23 years ago, with the sole purpose of strengthening Armenia, he said.

During this year's kickoff gala, a short documentary was shown about benefactor Jerry Turpanjian, who will be honored for his significant contributions to Armenia and Artsakh during the Armenia Fund Annual Banquet Gala to be held on November 23.

In California, the Telethon will air live for 12 hours on Thursday, November 27, 2014, from 8AM to

Gold Medal Awarded to Rev. Dr. Vahan H. Tootikian on the 55th Anniversary of His Ministry

By Rev. Shant Barsoumian

On the occasion of the 55th anniversary of his pastoral ministry and the publication of his 36th book, Rev. Dr. Vahan H. Tootikian was honored at a special event held at the the Armenian Congregational Church (ACC) on the evening of Friday, October 10, 2014. On the eve of the Feast of the Holy Translators, particular focus was given to Rev. Tootikian's body of written work, with all 36 books laid out on display.

Minister, lecturer, administrator, scholar, prolific writer, and community leader, the Rev. Dr. Tootikian is a member of many religious, educational, and philanthropic organizations, and a recipient of numerous awards. Currently he is the Executive Director of the Armenian Evangelical World Council and the Minister Emeritus of the Armenian Congregational Church of Greater Detroit.

Many individuals from throughout of the greater Detroit Armenian community were given an opportunity to share their testimonials about how Rev. Tootikian's works have impacted them and encouraged them throughout the years. His wisdom, insight, and skillful words through the whole spectrum of his publishing career have inspired so many in their spiritual lives as well as their cultural heritage, particularly in Armenian Christian history.

On this occasion, the Republic of Armenia's Ministry of Diaspora awarded Dr. Tootikian with the coveted "RA Ministry of Diaspora Gold Medal." This medal was given to him "in recognition of his notable services for Armenia-Diaspora partnership, and for his contributions to the strengthening of relations between Armenia and the Diaspora, as well as for his professional activities and his great contribution to the preservation of the Armenian identity."

The event was chaired by Mrs. Carole Basmadjian and Mrs. Hourig Jacobs. The cultural/recognition evening began with the singing of the American and Armenian national anthems, sung by Deacon Rubik Mailian, accompanied by Mrs. Susan Harrison on the piano. The invocation was offered by Rev. Shant Barsoumian, pastor of ACC.

Throughout the program three-minute testimonials were offered by eleven people in the following order: Carole Basmadjian, Hourig Jacobs, the co-chairs; Rodney Keteyian, Moderator of ACC; Robert Kachadourian, lay leader and community activist; David Terzibashian, deacon and community activist; Williams Terian and Karnig Kazazian, family friends; Dr. Richard Marburger, former moderator of ACC and President Emeritus of Lawrence Technological University; Rev. Fr. Hrant Kevorkian, Pastor of St. Sarkis



Armenian Apostolic Church and Hermine Manoogian, representing the Hamazkayin Association.

The church was also honored with the presence of Rev. Garnik Tutikyan, relative of Rev. Tootikian and the President of the Armenian Evangelical Churches of Armenia, who presented the Gold Medal from the Republic of Armenia to Rev. Tootikian. Many letters were received from dignitaries and church and organization leaders, of which only two were read. The first was a letter by His Holiness Aram I, Catholicos of the Great House of Cilicia. The second letter by Mr. Zaven Khanjian, Executive Director and CEO of the Armenian Missionary Association.

The key-note speaker of the evening was community leader and renowned literary critic, Edmond Azadian, who described Rev. Tootikian as a man of vision, a role model of integrity and a leader of inspirational charisma.

The evening's program included a number of musical selections performed by Deacon Rubik Mailian, Ms. Emma Bagdasarian, Ms. Sevahn Merian and Mrs. Susan Harrison as well as a beautiful recitation of the Armenian poem entitled "The Sower" by Dr. Taline Hagopian.

The program was also highlighted by a special "Kinetzon", book blessing, upon Rev. Tootikian's latest book, "My Life Journey," which was led by Archpriest Rev. Fr. Diran Papazian, of St. John's Armenian Apostolic Church.

Finally, Dr. Tootikian took the podium and thanked the organizers, the participants of the program and all the attendees for sharing this special day with him and making the event a memorable one. He thanked God for blessing his life and for providing him with many opportunities to serve the Church of Jesus Christ, the Armenian Nation and mankind. Then he led the guests in singing the Hayr Mer and closed the evening with a benediction.

A lavish reception followed the evening's program, and all who were present enjoyed the delicious food and desserts prepared by the ACC Women's Fellowship.

8PM PST. It will be broadcast on KSCI Channel 18 in Los Angeles, KTSF Channel 26 in San Francisco, KSAO Channel 49 in Sacramento, and KGMC

Channel 43 in Fresno, and on all Los Angeles-based Armenian television networks. The Telethon will also be webcasted on www.armeniafund.org.

ՀԱՆՈՅ ԴԵՐՈՍԱՄԱՐՏԻ ՈԳԵԿՈՉՈՒՄԸ ԹՈՐՈՆԹՈՅԻ ՄԵՋ



Հնչակեան հռչակաւոր հերոսներու եւ անվեհեր ազատամարտիկներու ծննդավայր եւ բնօրրան Հաճընը մղեց իր հերոսամարտը թրքական բանակին դէմ 1920 թուականին, եւ ամբողջ ինը ամիս քաջաբար դիմադրեց, մինչեւ որ գաղութատէր Ֆրանսան հայուն տուած իր խոստովանեցող դրժելով եւ Կիլիկիան պարպելով զայն թուրքին անամօթաբար յանձնեց:

Այդ օրերուն Հաճըն գտնուող մօտաւորապէս տասը հազար հաճընցիներէն գրեթէ միայն երեք հարիւր յիսուն հոգի վերապրեցան:

Հաճնոյ հերոսամարտէն ետք, եւ ի պատիւ մնացորդաց, «Նոր Հաճըն»-ներ կազմուեցան աշխարհի ամէն կողմ, որոնցմէ յիշատակուեցան արժանի եւ Լիբանանի Նոր Հաճըն հայաստանի Նոր Հաճըն աւանը:

Յիշատակելի են նաեւ ամէն տարի Հայաստանի, Լիբանանի, Ֆրանսայի, Միացեալ Նահանգներու եւ աշխարհի տարբեր գաղութներու մէջ Հաճնոյ հերոսամարտը նշող հանդիսութիւններն ու իմբային մասնակցութեամբ եւ երախտապարտ գոհաբերութեամբ եփուող մատաղը: Այս տարի աննախընթաց երեւոյթ դարձաւ Հաճնոյ հերոսամարտի հանդիսաւոր նշումը նաեւ թորոնթոյի մէջ, կազմակերպութեամբ թորոնթոյի Նոր Սերունդ Մշակութային Միութեան: Շաբաթ, Հոկտեմբեր 18-ի կէսօրէ ետք ժամը չորսին մինչեւ յաջորդ օրու վաղ առաւօտեան ժամերը, իսկ մը մը թորոնթոյի հաճընցի այրեր ու կիներ, իրենց հետ ունենալով բարեկամներու շրջանակ մը, տեղույս Ս. Երրորդութիւն Հայց. Առաք. Եկեղեցւոյ ներքնասրահին մէջ տքնաշանօրէն կը պատրաստէին յաջորդ օր մատուցուելիք մատաղը: Շարունակ եւ գրեթէ վեց ժամ

տեւող անդադար երկար փայտերով խառնուած եւ ճարպոտ տաք ջուրով կշտացած խառնուրդը համեմուած ու փետտուած միսի ու ցորենահատիկի, յաջորդ օր պիտի կոչուէր ՄԱՏԱՂ՝ Հաճնոյ հերոսամարտի նահատակներուն նուիրուած:

Խառնողներու խումբը կը բաղկանար երիտասարդ եւ տարիքոտ այրերէ եւ կիներէ, դեռատի աղջիկ եւ մանչ խանդավառ պատանիներէ: Երկու հսկայ կաթսաներու մէջ պատ րաստուած մատաղը մասնագէտ համտեսողներու կողմէ կնիք ստանալէ ետք, Կիրակի օրու վաղ առաւօտեան ժամերուն լեցուեցաւ մօտաւորապէս 250 տուփիկներու մէջ:

Յաջորդ օրը՝ Կիրակի, 19 Հոկտեմբերին, Ս. Երրորդութիւն Հայց. Առաք. Եկեղեցւոյ մէջ յաւարտ Ս. Պատարագի կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն՝ նուիրուած Հաճնոյ հերոսամարտի նահատակներու յիշատակի 94-ամեակին: Գանատահայոց նորընտիր Առաջնորդ Հոգ. Տ. Աբգար Վրդ. Յովակիմեան իր քարոզին մէջ անդրադարձաւ Հաճնոյ հերոսամարտի խորհուրդին՝ որ կը յատկանշէ հայուն վճռակամութիւնը գոյատեւելու եւ ապրելու ազատ ու ինքնիշխան: Ան թելադրեց ըլլալ հաւատարիմ մեր անցեալին, խարսխելու համար մեր ներկան ու ընթանալու դէպի ապագայ:

Ապա, հոգեւորական դասն ու ժողովուրդը ուղղուեցան եկեղեցւոյ Մակարոս Արթինեան սրահը, ուր գետեղուած մատաղը օրհնուեցաւ Առաջնորդ Հայր Սուրբին եւ եկեղեցւոյ հոգեւոր հովիւ Արժ. Տ. Զարեհ Աւագ Քհնյ. Զարգարեանի կողմէ, ի ներկայութեան իր հերոսներուն երախտապարտ եղող մեր ժողովուրդին, որուն բաժնուեցաւ պատրաստուած հոգեճաշը: Թղթակից

ՀԱՆՈՅ ԴԵՐՈՍԱՄԱՐՏԻ ՆՇՈՒՄ ՊԱԹՈՆ ՌՈՒԺԻ ՄԵՋ

Տարեկան աւանդուելիւն դարձած Հաճնոյ հերոսամարտի նշումը եւ մատաղի աւանդական պատրաստութիւնը առիթը կ'ընծայէ հաճընցի հայրենակիցներու եւ մանաւանդ նորահաս սերունդին իրենց յարգանքի տուրքը մատուցելու Արժուեբոյն Հաճընի հերոսական կոիւններուն զոհուած նահատակներուն:

Ինչպէս նախորդ տարիներուն, այս տարի եւս Միացեալ Նահանգներու Լուիզիանա նահանգի Պաթոն Ռուժի մէջ, Հաճնոյ հայրենակցական Միութիւնը կազմակերպեց Հերոսամարտի 94-րդ ամեակին նուիրուած մատաղօրհնէք եւ հոգե հանգստեան պաշտօն:

Շաբաթ, 18 Հոկտեմբեր 2014-ին, ընկերուհի Մարի Գալթաքեանի բնակարանին մէջ հաւաքուած էին հաճընցի տիկիներ պատրաստելու համար հերոսամարտին նուիրուած աւանդական մատաղը:

Մեծ խանդավառութեամբ, մինչեւ երեկոյեան ուշ ժամերը անտք պատրաստեցին մատաղը, ազգային եւ հայրենասիրական երգերով:

Յաջորդ օրը, Կիրակի 19 Հոկտեմբեր 2014-ին, տեղի ունեցաւ հանդիսաւոր Սրբ. Պատարագ եւ

հոգեհանգստեան պաշտօն՝ Հաճնոյ հերոսամարտի նահատակներու յիշատակին Պաթոն Ռուժի Սրբ. Կարապետ եկեղեցւոյ մէջ:

Պատարագեց եւ քարոզեց Տէր Թադէոս Ապտալեան, որմէ ետք կատարուեցաւ մատաղօրհնէք: Յաւարտ Սրբ. Պատարագին եկեղեցւոյ սրահին մէջ հաւատացեալները հաւաքուեցան եւ ճաշակեցին օրհնուած մատաղը: Օրուան խորհուրդը փոխանցեց Ս.Գ.Հ.Կ. Կեղրոնական վարչութեան անդամ Ընկ. Վազգէն Գալթաքեան: Ան վեր առաւ հաճընցիներու խիզախ նկարագիրը եւ հայրենասիրութիւնը, նշելով թէ Հաճընը դատարկուեցաւ, սակայն հաճընցին մնաց միշտ ամուր եւ հաստատ իր հայրենասիրութեամբ եւ հաւատքով:

Տեղի ունեցաւ գեղարուեստական կոկիկ յայտագիր մը, որուն իրենց մասնակցութիւնը բերին Տիկ. Ազատուհի Մուրթաֆեան (ասմունք) եւ Տիկ. Վերգինէ Տագէսեան (մեներգ):


Ներկաները բաժնուեցան սրահէն նորոգելով իրենց ուխտը միշտ հաւատարիմ մնալու իրենց ժառանգութեան:

Վարձքը կատար բոլորին:

ՑԵՂԱՄՊԱՆՈՒԹԵԱՆ 100-ԱՄԵԱԿԻՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՔԱՅԼԱՐՇԱԲ

Հասոյթը Պիտի Տրամադրուի Պատմական Հայաստանին Նուիրուած Հրատարակութեան

Հ ա յ լ եռնագնացներու ընկերակցութեան նախաձեռնած ու Հայկական Յեղասպանութեան 100-ամեակին նուիրուած 100 քիլոմետր (62.14 մղոն) քայլարշաւ-հեծելարշաւի կազմակերպիչները կը տեղեկացնեն, թէ որոշուած է քայլարշաւին գոյացնելիք հասոյթը տրամադրել Պատմական Հայաստանի պատմութեան նուիրուած 36 հատորնոց շարքի մէկ հատորին հրատարակութեան ծախսերուն:



Հայկական ճարտարապետութիւնը ուսումնասիրող հիմնարկը (Research on Armenian Architecture, RAA) Հայկական Յեղասպանութեան 100-ամեակին նուիրած է հրատարակ-չական այդ աշխատանքը, որուն իւրաքանչիւր հատորի հրատարակութեան ծախսը մօտաւորապէս 30,000 տոլար է:

Քայլարշաւի կազմակերպիչները որոշած են հովանաւորել Մոկա (Մոգս) գաւառին նուիրուած հատորը, իսկ եթէ յաւելեալ գումար կարելի ըլլայ գոյացնել, ապա պիտի հովանաւորուին նաեւ Խնուսի եւ Քղիի նուիրուած հատորները:

«Սոյն շարքին մէջ լոյս պիտի տեսնեն լուսանկարներ, ինչպէս նաեւ ուսումնասիրական եւ վաւերագրական տեղեկութիւններ, որոնք արդիւնք են 41 տարիներու աշխատանքի: Անոր մէջ ներկայ եւ բունագրաւ Հայաստանի պատմութիւնը պիտի ներկայացուի գաւառ առ գաւառ, գիւղ առ գիւղ՝ լուսարձակի տակ առնելով մեր ճարտարապետական հարուստ ժառանգութիւնը: Իւրաքանչիւր հատոր պիտի հրատարակուի

անջատաբար՝ հայերէնով, անգլերէնով եւ ռուսերէնով», կը յայտնէ Հայկական ճարտարապետութիւնը ուսումնասիրող հիմնարկին Միացեալ Նահանգներու բաժանմունքի նախագահ Ժորա Մանուչարեան:

Նշենք, որ քայլարշաւը իրականացնելու ջանքերուն վերջերս միացած են նաեւ Հայկական հեծելարշաւի ընկերակցութիւնն ու բարեսիրական «Hye Riders Motorcycle Club» կազմակերպութիւնը:

Արշաւը տեղի պիտի ունենայ Գոհաբանութեան տօնի շաբաթավերջը, յարգելու համար յիշատակը 1.5 միլիոն զոհերուն՝ անոնց կտրած մահուան քայլարշաւին մէկ փոքր բաժինը կրկնելով: Քալողները նաեւ հովանաւորներ պիտի ապահովեն եւ դրամահաւաք պիտի կատարեն:

Արշաւին պատրաստուելու նպատակով փորձեր սկսած են արդէն եւ տեղի կ'ունենան իւրաքանչիւր Կիրակի օր:

Անոնք, որոնք կը փափաքին մասնակցելի քայլարշաւին, կրնան այցելել www.facebook.com/100kmtributemarch կայքէջը, կամ դիմել armenianhikersassociation-la@yahoo.com, Aca@armenian-cycling.org հասցէներուն ու 818/434-5952 թիւին:

833 W. Glenoaks Blvd. Glendale, CA 91202 (818) 240-0065



Dr. Missak Ekmekdjian
Chiropractor



Dr. Anahid Ekmekdjian
Chiropractor

Մեծախառնակներու և մանուկներու Քայրոփորքի բուժում:
Գլխացաւ, վզի, մէջքի, բոցային և մկանային ցաւեր:
Ինքնաշարժի վթարի հետեւանքով պատճառած վնասուածքներու բուժում:

Ձեր առողջութիւնը մեր մտահոգութիւնն է

ԴԱՒԱՆԱՓՈՒՆՈՒԹԻՒՆՆ ԻՐ ԳԻՆՆ ՈՒՆԻ

ՍԱՄՈՒՒՅԼ ԿՈՍԵԱՆ

Եւրասիոնոսրդի խորհրդարանական վեհաժողովի աշխատանքները հակադիր բեկեռներում ընթացող մենամարտ է լիզեցնում, բացարձակորէն չյարաբերուելով կառույցի քաղաքականութեան տրամաբանութեանը: Նախ՝ «Աննախաղէպ ճնշումները Ատրպէյճանում» թեմայով քննարկում եւ ապա՝ Լեոնային Ղարաբաղի հակամարտութեան վերաբերեալ բանաձեւի ընդունում՝ «Լեոնային Ղարաբաղում եւ Ատրպէյճանի միւս օկուպացուած տարածքներում բռնութեան աճը» վերնագրով:

Եթէ Ատրպէյճանում այսօրոհների նկատմամբ հետապնդումների, ճնշումների, սպառնալիքների մասին տեղեկատուութիւնը յայտնի իրողութիւն է, ապա Ատրպէյճանի եւ Ղարաբաղի պարագայում երկու իրարամերձ արժէքները համատեղումն առնուազն զաւելչում է: Եթէ առաջինը դէպքում Ալիւելի կառավարութիւնը մօտ 100 քաղաքատարկեալ է պահում, կրկնակի աւելի, քան Բելառուսում եւ Ռուսաստանում միասին վերցրած, ինչի առիթով արեւմտեան եւ միջազգային երկրների պաշտօնեաներն ու կազմակերպութիւնները մտահոգիչ քննադատութեան յայտարարութիւններով են հանդէս եկել, ապա Ղարաբաղի դէպքում հակառակն է, որի համար չճանաչուած հանրապետութիւնը բնորոշուել է որպէս տարածաշրջանում ամենաժողովրդավարը:

Սակայն ԵՄ-ում ճշմարտութեան չափորոշիչը ոմանց համար հաւանաբար կաշտուելու ու նուիրատուութիւններն են: Նախքան եւ զազի պաշարները թույլ են տալիս ազերի բռնատիրական իշխանութեանը ահուելի գումարներ ծախսել՝ քողարկելու երկրի իրական պատկերը, օգնելու ներքին իրավիճակի առնչութեամբ ներողամիտ դիրքորոշում «գնել», Արեւմուտքում ազդեցութիւն եւ ընկերներ հաւաքագրել: Եւ պիտի արձանագրել, որ Ատրպէյճանական իսթաբլիլի շատերի քիմբէն է հաճոյ դառնում:

ԵՄ-ի կողմից Ղարաբաղի վերաբերեալ Ատրպէյճանական պատուիրակութեան անդամ էլզան Սուլեյմանովի եւ Յունաստանի պատգամաւոր, Յունաստանի նախկին արտգործնախարար Թէոդորա Բակոնախի կողմից ներկայացուած բանաձեւի ընդունումը հենց այս գործօնով պիտի պայմանավորել: Պատահական չէ, որ Ատրպէյճանի ընդդիմադիր լրագրող Խաղիջա Իսմայիլովան ԵՄ պատգամաւորներին է մեղադրում Ատրպէյճանում ստեղծուած բռնատիրական իրավիճակի համար:

«Երբ Մամեդյարովն ու Ալիւելը ելոյթ էին ունենում ԵՄ-ում, նշում է նա, իբր, Ատրպէյճանում քաղաքական բանտարկեալներ չկան, յենուում էին հենց ձեր 2013 թ. քուէարկութեան վրայ, երբ դէմ քուէարկեցիք քաղաքական բանտարկեալների վերաբերեալ Շտրասբերի բանաձեւին: Այդ

օրը յատուկ էր քուէարկութեանը մասնակից պատգամաւորների քանակով, չգիտեմ՝ ինչ էր տեղի ունեցել, բայց յոյս ունեմ, որ դա կապուած չէր փողի ու «խաւխաւջին» դիւանագիտութեան հետ: Դուք հաշուի չէք առնում, թէ ձեր քուէարկութիւնը ինչպիսի վտանգ է այլ մարդկանց համար: Իլհամ Ալիւելն էլ յայտարարում է, թե ԵՄ-ն հաստատեց, որ Ատրպէյճանում քաղաքատարկեալներ չկան»: Իռլանդացի պատգամաւոր Մայքլ Մաքնամարան «Աննախաղէպ ճնշումները Ատրպէյճանում» նոյն քննարկմանը բացայայտորէն յայտարարել է, որ Ատրպէյճանական լրբբատներն իրեն առաջարկել են Ատրպէյճանի օգտին աշխատելու համար: Պատգամաւորը համոզուած է, որ ինքը մէկն է բազմաթիւ պատգամաւորներից, որոնց արուում է այդ առաջարկը՝ յաւելելով, որ Ատրպէյճանի դէպքում ամէն ինչ կապուած է փողի եւ նախաշին գումարների հետ, առաջարկելով բացայայտել կաշառակերներին եւ այդ մասին տեղեկացնել նրանց ընտրողներին, որպէսզի ընտրողները հասկանան, թէ ինչ քուէարկութիւն են կատարում իրենց ընտրած պատգամաւորները ԵՄ-ում:

Սակայն իրողարձուութիւններին ընթացքը փաստում է, որ ԵՄ պատգամաւորների մի մասի համար պատասխանատուութեան, բարոյականութեան խորհրդանիշերը բացառապէս նիւթական արժէքներն են: Ղարաբաղեան խնդիրն վերաբերող բանաձեւի վերնագիրն իսկ կողմնապահութեան եւ սուբիեկտիւութեան հրավառութիւն է: Զատու է, թէ Ղարաբաղում ով ում վրայ է բռնանում, մանաւանդ «օկուպացուած տարածքներում», որոնք բնակեցուած չեն: Հակառակ հայկական պատուիրակութեան հակազդեցութեանն ու ջանքերին, ապացուցելու, որ ԵԱՀԿ-ն միակ կառուցն է, որին էլ պատկանում է ԼՂՀ հակամարտութեան կարգաւորման մանդատը, եւ ԵՄ-ի առաքելութիւնը չէ դարաբաղեան խնդրի քննարկումը, այդուհանդերձ, հայկական առաջարկը՝ բիւրոյի որոշումը ուղղել մոնիտորինգի կոմիտէ, քուէարկութեան արդիւնքում պատգամաւորներին հետաքրքիր չէր, որ իրենց քուէարկութեամբ կարող էլարուածութիւնն աւելանալ սահմանին, խորանալ ժողովուրդների միջեւ անվստահութիւնը, անմեղ զոհերի թիւը՝ բազմապատկուելու: Այդօրինակ դաւանափոխութիւնը միանշանակորէն իր գինն ունի:

Ղարաբաղը ԵՄ անդամ չէ, իսկ որպէս Ատրպէյճանի մաս դիտարկելու դէպքում երեւի մոռացել են, որ «Աննախաղէպ ճնշումները Ատրպէյճանում» թեման արդէն քննարկել են: Այս դէպքում նպատակաշարմարը գուցէ Ղարաբաղի անկախութեան ճանաչման խնդիրն առաջ բերելն է: Ամէն ինչ հնարաւոր է, եթէ միայն ազերիների նավթագային պաշարները սպառուեն:

«Գրալկան Թեքթ»

ՅՈՒՇԱՏԵՏՐ. ՄԱՅՐԵՆԻ ԼԵՁՈՒԻՍ ՏԵՍՈՒՐ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ

ՈՌՊԵՐ ՀԱՏՏԵՋԵԱՆ

Մինչեւ երէկ ես զիս կը մխիթարէի՝ մտածելով, որ աշխարհի զանազան երկիրներուն մէջ դեռ կան մեծ թիւով հայեր, որոնք, հակառակ նահանջող ազգային բարքերու, տակաւին կը սիրեն կարգաւ մայրենի լեզուով, տակաւին հայերէն գիրք կը կարդան, կամ գոնէ հայերէն թերթ կը կարդան: Ինծի նման իր մայրենի լեզուին սիրահար մէկուն համար, ինծի նման մէկու մը համար, որ իր ամբողջ կեանքը նուիրած է մայրենի լեզուի պաշտամունքին, ասիկա պիտիարար մտածում էր: Կը հարցնէի.

- Քանի՞ հոգի այսօր հայերէն կը կարդայ, հայերէն կարդալու նիւթ կը փնտռէ:
- Անհամար:
- Յետոյ կ'աւելցնէի.
- Բարեբախտաբար:

Այո՛, թէեւ իմ շուրջ հայերէն կարդացողներուն թիւը ամէն օր կը պակսէր, ես շատ լաւ կը զգայի ատիկա, բայց եթէ հաշուել ուզէի, թէ արդեօք աշխարհի վրայ, Հայաստանէն դուրս, քանի՞ հոգի դեռ կը յամառէր հայերէն կարդալու, սրտի ցնծութեամբ կը մտածէի, որ կարելի չէր համբել:

Երէկ յանկարծ մտածեցի, որ այլեւս ժամանակը եկած էր մտածելու, թէ պէտք էր դադարեցնէի սա «անհամար» բառին գործածութիւնը իմ սքանչելի լեզուով, մանաւանդ՝ իմ սքանչելի արեւմտահայերէնով կարդացողներուն թիւը, ենթադրելու ընթացքին: Ի՞նչ «անհամար»: Այլեւս կարծես կրնայինք համբել, թէ աշխարհի վրայ քանի հոգի մնացած է հայերէն գիրք կամ թերթ կարդացող: Անհամարը, որ անձանթ խոշոր թիւ էր, վերածուած էր փոքրիկ թիւի մը, որ մեզի կրնար ծանօթ դառնալ: Այսինքն այլեւս կրնայինք համբել, այսինքն անոնց թիւը համբուելու աստիճան նուազած էր:

Կրնա՞ս համբել անտառին ծառերը, կրնա՞ս համբել երկնքի աստղերը, կրնա՞ս համբել երկինքէն թռչող գացող թռչունները, կրնա՞ս համբել անձրեւին կաթիլները, կամ՝ տեղացող ձիւնի փաթիլները, կրնա՞ս համբել պարտէզիդ մարգագետինը կազմող կանաչ հրաշալի խոտերը, ծառի մը տերեւները: Աստուած իմ, ինչ երջանկութիւն է այսքան շատ ըլլալը, ինչ երջանկութիւն է անհամբելի ըլլալը: Ինչ ուժ է սպառնովութիւնն է անհաշուելի բանակի մը կազմելը: Այո՛, ճիշդ է, որ այսքան շատին մէջ քու ինքնութիւնը թերեւս քիչ մը շուրքի մէջ պիտի մնայ, թերեւս ալ անպիտի կորսուի բազմութեան ու զանազանութեան մէջ, բայց այդ ինքնութիւնը այդ բազմութեան շնորհիւ է, որ ուժ պիտի դառնայ եւ «Ես գոյութիւն ունիմ» պիտի ըսէ:

Օ, ինչ մեղք, որ հիմա ես յանկարծ անդրադարձայ տիտուր այն ճշմարտութեան, թէ հայերէն լեզուի հաւատարիմ մարդոց թիւը անպայման անցած է «անհամբելի»-էն դէպի «համբելի»: Եւ ասիկա՝ ժողովուրդի մը մէջ, որուն ամբողջ բնակչութեան թիւը թերեւս դեռ կը շարունակէ մնալ

անհամբելի: Ինչ ստորնութիւն եւ նուաստացում ինծի համար: Երբ կարելի չէ համբել, թէ աշխարհի վրայ քանի՞ հատ կատու կամ մուկ կայ, երբ կարելի չէ համբել, թէ աշխարհի վրայ քանի՞ հատ ճանճ կը թռչի, համբել այն հայ մարդիկը, որոնք հայերէն կը կարդան: Եթէ արեանս քննութիւնը կատարել տայի ու ստացուած տեղեկագրին մէջ տեսնէի, թէ քանի մը վնասակար մանրէներ կան «զանցառելի քանակութեամբ», որքան պիտի ուրախանայի այդ «զանցառելի քանակութեան» համար, այդ փոքրիկ թիւին համար, որ վնաս չի պատճառեր, գոր կրնաս արհամարհել ու անգոյ նկատել: Բայց ես կրնամ ուրախանալ, եթէ յանկարծ սկսիմ մտածել, թէ աշխարհի վրայ հայերէն կարդացողներուն թիւն ալ դարձած է «զանցառելի քանակութիւն»:

Կը ցաւիմ ո՛չ թէ անոր համար, որ ես հայերէն կը գրեմ, կը կարդամ, ո՛չ թէ անոր համար, որ կը վախնամ որ աշխարհի վրայ քիչ մարդ կը կարդայ զիս, կը ցաւիմ ո՛չ թէ անոր համար, որ հայ գրագէտը ու հայ մամուլը մոռութեամբ աւելի ունի, այլ կը ցաւիմ պարզապէս անոր համար, որ կը խղճահարիմ, մեռնելու աստիճան կը խղճահարիմ իմ մայրենի լեզուին վրայ: Ես, որ այնքան լաւ գիտեմ, թէ անցեալի մէջ ինչ «անհամբելի» թիւով հայ մարդիկ ինչ «անհամբելի» տառապանքներու գնով ինչ «անհամբելի» հայերէն գրական գործեր ստեղծեցին, ինչ «անհամբելի» հիանալի բառեր ստեղծեցին այս լեզուին համար, թէ՛ ինչպէս «անհաշուելի» բարձրութեան մը տարին մեր անգուզական լեզուն, թէ՛ ինչ հրաշալի հայերէն ձայն բարձրացուցին դէպի երկինք ու դէպի պատմութիւն, չեմ կրնար ընդունիլ, որ այդ լեզուին տէրերը կռնակ դարձուցած ըլլան անոր: Ասիկա սիրելի հարազատ մը կորսնցնելու ցաւին չափ ծանր է, բայց ո՛չ թէ մէկ սիրելի հարազատ, այլ՝ «անհամբելի» թիւով շատ սիրելի հարազատներ կորսնցուցած ըլլալու չափ ծանր: Գիտեմ, թէ լեզուն դեռ անդունդին եզերքը չէ, գիտեմ, թէ տակաւին մահամերձ չէ, բայց գիտեմ նաեւ, որ ան չի գտնուիր շրթներուն վրայ այն «անհաշուելի» թիւով մարդոց, որոնք պէտք է այս լեզուով խօսէին, այս լեզուով կարդային, այս լեզուով գրէին, այս լեզուով սիրաբանէին, նոյնիսկ այս լեզուով կուռէին իրարու հետ:

Թերեւս այս գիշեր պիտի ուզէի մեկուսանալ անկիւն մը եւ աղօթք մը մըմնջելով՝ ներողութիւն խնդրել Մեսրոպ Մաշտոցէն սկսեալ մինչեւ մեր ամէնէն շնորհալի գրողին, նոյնիսկ անշնորհ գրողին, կամ լեզուաբանին, մարդիկ, որոնք շինեցին հայոց լեզուն ու իբրեւ ծառանդ թողուցին մեզի: Ներողութիւն խնդրել Աբովեաններէն կամ վարուժաններէն, Մեծարեաններէն կամ Տէրեաններէն: Թէեւ մենք չենք յանցաւորը, բայց միայն մեզի նման «համբելի» քանի մը հայերն են, որ պիտի կարենային ներողութիւն խնդրել անոնց խնկելի լիշատակէն:



ՈՐՍՈՐԴ ՆԵՐԼՍՈՆԻ ԵՒ ՃՆՃՂՈՒԿՆԵՐԻ ԶԱՐՄԱՆԱԼԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

ԱԼԻՍԹՈՎԿԱՆՆԻՍԵԱՆ

Ո՞վ է լսել՝ ոչ անապատային գոտում գտնուող Հայաստանի մեր այս կողմերում՝ Երեւան մայրաքաղաքի արուարձաններից մեկում, չէ՞ք հաւատալ, չկան ճնճղուկներ, որ միշտ եղել են դարուց դար: Եթէ անգամ ոչ մի ուրիշ թռչուն չի մնացել երկրում՝ կուռնկները, արագիւնները, վայրի բաղբերն ու սագերը արդէն տաք երկրներ են չուած եղել, մեր ցրտադիմացկուն, մեր քաղցադիմացկուն, անգլխիթեան ու անտարբերութեան սովոր ճնճղուկները, նոյնիսկ ամենաճրճքան ցրտերին երկրից չեն բացակայել երբեւէ:



Իսկ յետոյ արդէն իրեն ու Սիլվիկին թեթեւ կողմնակի եկամուտ ապահովելու համար սկսեց ճնճղուկ որսալ: Պատերազմի վետերանի ու հաշմանդամի թոշակի մի մասը Նունէին էր ուղարկում, մի մասը տալիս էր հարեւանուհուն, որ մուրացիկու թիւից էր պահել նրա երկու երեխաներին. Փանք Աստծոյ, գողութիւնից նրանք հեռու էին բնոյթով: Նրա խփած որսը գնում էին մի քանի հարեւաններ՝ հատը 100 դրամով: Երեխաներին ուրիշ կենդանու մսով չէին կարողանում կերակրել, իսկ ճնճղուկը, ինչքան չլինի, միս է:

Բայց ահա արդէն քանի ամիս էր, ինչ ո՛չ ճնճղուկի ճուռողուն, ո՛չ ճագուկներին թռչել սովորեցնելու ծնողական մտահոգ ճլւղոց, ո՛չ ծառերի ճիւղերի մէջ խոնոտող միջանմանային եւ միջընտանեկան յարաբերութիւններ ճշտող դատաւարութիւն՝ Նրանք չբացել էին, չկային՝ Եւ ոչ ոք այս փաստը առանձնապէս չէր նկատել՝ բացի Նելսոնից, նրա ընտանիքից ու մի քանի հարեւաններից: Նման պատմութիւնները (թէեւ այս մէկը դաժան է թւում առաջին հայեացքից) ոչ ոքի չեն զարմացնի:

Քիչ բան է մնացել աշխարհում, որ քաղաքակիրթ մարդու զարմանքը շարժի: Մենք հօ գլոբալացումից, մոլորակի անցողաբաժից հեռու աբորիգեններ չէ՞նք, որ ամէն մի փայլիլուն կամ տարօրինակ ձայն հանող խաչձ կուլ տանք: Բայց զարմանալ՝ մանաւանդ այս պատմութիւնից, դեռ հնարաւոր է: Որովհետեւ զարմանալի է դէպքերի ողջ ընթացքը: Թաղում ոչ մէկի մտքով չէր անցնի, որ արցախեան ապստամբարտից առաջ բարձրակարգ փականագործ, ինքնագործ թատերական խմբի պրիմա դերասան, նոյնիսկ արջ ու վարագ տապալած գերագանց որսորդ, պատերազմում երկու ոտքերից զրկուած Նելսոնի քնքշագին սիրոյ առարկայ միակ դուստր Նունեն, ում Նելսոնը առանց մօր էր մեծացրել, կը փախչի մի ռեցիդիվիստի հետ, ով անգամ տուն էլ չուներ:

Որ մի օր էլ Նելսոնի տանը կը յայտնուի հեռաւոր գիւղերից եկած Չահել մի կին՝ Սիլվիկ անունով, կամ որ Սիլվիկը Նելսոնին անկեղծօրէն կը պատմի իր գլխին եկածը, թէ ինչպէս՝ հայրը նրան՝ սուսուփուս, վախից կուչ եկած, յայտնաբերել էր մարագում իրենց տուն հիւր եկած գարմիկի գրկում: Թէ ապա ոնց էր 50-ամեայ գարմիկը տնից վճուտուած Սիլվիկին տարել վաղիմիւր եւ նրան մարմնավաճառ դարձնելու յոյսը կտրելուց յետոյ՝ որպէս արիւնակից խղճալով, գոնէ ինքնաթիւով ճամբել էր Երեւան: Նելսոնը, այս սրտառուչ պատմութիւնը լսելով, շեքապրեան ողբերգակ դերասաններին արժանի ներշնչանքով խփել էր կրծքին ու Սիլվիկին ասել. «Սրանից յետոյ քո խաթրին դիպչողը ինձ հետ գործ կ'ունենայ: Իսկ էդ քո ոչուփուչ գարմիկին որտեղ բռնեմ, աստիպանելու եմ, հանգիստ եղիր. նրա տեսակը ապրելու իրաւունք չունի»:

Նելսոնը, դուք այդպիսի բան չէք լսել, վերսկսել էր իր որսորդութիւնը: Քանի որ իր վիճակով նա առանց սայլակի տեղաշարժուել չէր կարող, հրաձգարանի հին հրացանով սկզբում միայն ռազմիկի իր նշանաւորութիւնը ստուգելու համար,

տեղ էլի մի զարմանալի բան պատահեց: Նելսոնի բջջայինի վրայ գանգեց մարտական ընկերը: Նելսոնը հասկացաւ, որ երախտագիտութիւնն է խօսել ընկերոջ արտի մեջ: Վիրաւոր վիճակում գնդակների տարափի տակ, ձեան վրայ արեան յետագիծ թողնելով, Նելսոնը նրան քարշ էր տուել մինչեւ դաշտային բուժկէտ-7-օրեայ կոմպլիք դուրս գալով՝ նա Նելսոնին պատմել էր անդրաշխարհ կատարած իր զարմանահրաշ ճամբորդութեան մասին, որտեղից չէր ուզեցել ետ գալ, բայց պարտադրել էին՝ «Գնա, -ասել էին,- դու քո տեսած դրախտին, նուսիսկ քաւարանին չես արժանացել, ապաշխարելու եւ վկայութիւն տալու մի հնարաւորութիւն ենք տալիս քեզ»:

Նելսոնը լսել էր, որ սա պատերազմից յետոյ հարստացել է, օլիգարխ է դարձել: Ընկերը հեռախօսով ասաց, որ ուզում է այցի գալ իրեն: Կ'ասէ՞ք՝ «Սա այնքան էլ զարմանալի չէ, օլիգարխն էլ մարդ է՝ սիրտը քարից չի»: Օրական հացի փողը հանելուց յետոյ՝ մնացած ճնճղուկների մարմինները շարքերով դարձում էին հարեւանի սառցախցիկում: Նունէն հանգիստ էր, որ այնտեղ կուտակոււմ է իր աբորտի գումարը: Բայց օլիգարխի գանգով ամէն բան փոխուել էր: Նելսոնը յայտարարեց, որ իր մարտական ընկերոջը չի կարող առանց պատիւ տալու ճանապարհել, մանավանդ որ օլիգարխը ճշգրիտ օր ու ժամ էր նշանակել: Ընտանիքի հայրը հասկացաւ, որ այդ օրը պահեստաւորուած բոլոր ճնճղուկներին պէտք է եփել մի կաթսայի մէջ եւ հարիսա պատրաստել: Նունէն, լաց լինելով, հորը խնդրեց չանել այդ յիմարութիւնը, օլիգարխը իրենց հարիսայի կարօտը չէ: Բայց Նելսոնն անդրադուրեց իր:

«Մենք նրան կ'ասենք, որ մեր փողոցի ասֆալտը նորոգել, որ գիշերային լուսաւորութիւն անցկացնի, լուծի ջրի հարցը, որ մեր հարեւաններից մէկին-երկուսին մի քիչ վառելիքով ապահովի»:

«Իսկ մե՞զ, պապ, մեզ ոչ մի բա՞ն»:

«Մենք, ի՞նչ է, մեր հպարտութիւնը տանու՞ւլ ենք տուել պատերազմում: Ամօթ չէ՞, որ նրանից ինձ համար բան խնդրեմ,-ասաց նա նոյն պաթոսով, որով հին օրերին հանդիսականներով լեփ-լեցուն դահլիճին էր դիմում,- եւ աւելացրեց,- ինքը կը հասկանայ, մի բանով կ'օգնի: Ես նրա կեանքն եմ փրկել»:

Օլիգարխը եկաւ: Կերաւ 100 ճնճղուկից պատրաստուած հարիսայից մի մեծ ափսէ: Զարմացաւ, որ այս աղբարկի տանը այսպէս նուրբ ու համեղ հարիսա են պատրաստում: Մտածեց՝ իհարկէ ինքը արժանի է նման ուտեստի, ինչպէս եւ աշխարհի շատ ու շատ բարիքների, որ նախատեսուած են իր նման տղերքի համար, խոստացաւ կատարել Նելսոնի բոլոր խնդրանքները եւ էլի մի ափսէ հարիսա խնդրեց: Եւ այստեղ էլ նրա կողորդին մնաց ճնճղուկի մի շատ նուրբ ու սուր ոսկրիկ, որ Սիլվիկը հարիսան խառնելիս չէր նկատել: Դա էլ պատճառ դարձաւ, որ օլիգարխը հիւանդանոց ընկնի ու երկար տանջուելուց յետոյ աւանդի հոգին: Եթէ նրա թիկնապահը, որին պատիւ էին արել սեղան նստեցնել բոլորի հետ, չամաչէր ու երկրորդ ափսէ հարիսան խնդրէր, գուցէ եւ ոսկրիկը ինքը կուլ տար՝ Բայց վկայողներ կան, որ երկնքում ամէն ինչ ծորագրաւորուած է:

Որքան յայտնի է այն աշխարհից վերադարձածներին ապաշխարելու հիմնականում միայն մէկ հնար-

րաւորութիւն է սրբում: Այդ պահից ահա անցել էր 200 օր: Օլիգարխը կատարելու էր իր խոստումները, եթէ չմեռնէր, յայտնի չէ: Բայց որ Նունէն լոյս աշխարհ բերեց իր երկրորդ թոնթոլիկ որդուն, կատարուած փաստ է: Նելսոնը երջանիկ է իր թոռներով, եւ խորթ տատիկն էլ սիրել է այս երկրորդին, որովհետեւ Նելսոնը նրան խոստացել է հակառակ դէպքում նրան ուղարկել այնտեղ, որտեղից եկել է:

Ճնճղուկները վերացել էին ոչ միայն Նելսոնի պատշգամբից, այլեւ ամբողջ թաղամասից: Իսկ ազուաներն ու կաշաղակները բազմա-նում էին: Երբեմն շատ գեղեցիկ երգող գունաւոր թռչուններ էին գալիս հիւրախաղերի, երգում էին ու ապահովաբար հեռանում: Ո՛չ ազուաններն էին նեղացնում նրանց, ո՛չ էլ Նելսոնն էր նշան բռնում նրանց կողմը:

Բայց ճնճղուկները՝ «Եթէ նրանց մտով չկերակրելիր օլիգարխին, ճնճղուկները չէին վերանայ», - ասաց Նունէն:

«Ի՞նչ ես ասում,- առարկեց Նելսոնը,- ե՞րբ ես Սուրբ գիրք կարդում, որ իմանաս, թէ ինչ է ասել մեր Տէրը հենց ճնճղուկների մասին: Ասել է այ՛ թէ ինչ.«Մի՞թէ երկու ճնճղուկ մի դահեկանի չի վաճառուում, եւ նրանցից ոչ մէկը առանց ձեր Հօր գիտութեան,- կրկնում եմ,- առանց ձեր Հօր գիտութեան,- լսու՞մ ես,- գետին չի ընկնում, իսկ ձեր գլխի մագերին անգամ հաշուուած են»:- Եւ աւելի ոգեւորուած արտասանում էր շարունակութիւնը.«Ուրեմն մի՛ վախեցէք, քանի որ դուք շատ աւելի արժէքաւոր էք ճնճղուկներից»:

Տեսա՞ր: Իմ որսացած թռչունների հոգիները հրեշտակների են վերածուել, թեւածում են թոռներին շուրջը: Դու չե՞ս լսում նրանց սրինգների երգը»: Նելսոնի համար իր տունը ապարանք է ու թատրոն է նաեւ: Նա մերթ հիացմունքով նայում է հոգնածութիւնից իբր գլխացաւով բռնուած Սիլվիկին, որ նստում է պատուհանի մօտ ու տխուր աչքերով նայում ինչ-որ հեռաւոր կէտի... Մերթ ներողամտօրէն դիտում է Նունէի գայլոցթից հուրհրատող գեղեցիկ աչքերին, որոնցով ուզում է շանթել, սպանել Սիլվիկի ներկայութիւնը, բայց ուզած-չուզած նրա գիրկն է դնում մանկիկին, որ գնա մի գործ ճարի... Մերթ էլ խենթացած իր ամեն ինչ տեսնող, գննող ու հասկացող թոռնիկների հրեշտակային համբերութիւնից, մօտ է կանչում մեծին, համբուրում, խոստանում ամենալավ պայտասակը առնել նրա համար, երբ սկսի դարձող յաճախել: Փոքրին, քանի դեռ նա ոչ մի բան չի հասկանում, ինքն էլ իր ասածին չհաւատալով, խոստանում է իսկական որսորդական հրացան, բայց չի մոռանում աւելացնել՝ «հենց որ հարստանամ»: Իսկ ճնճղուկները եկել են ու էլի բնաւորուել: Նելսոնը ուխտ է արել՝ էլ երբեք նշան չբռնել ճնճղուկների վրայ, այլ կերակրել ու խնամել, մանաւանդ՝ ցուրտ ձմեռներին: Հիմա արդէն մտածում է ճագարներ բազմացնելու մասին: Իհարկէ ընդունում է, որ ճագարներն էլ ճնճղուկների պէս Աստծոյ ստեղծած արարածներն են, բայց չէ՞ որ սրանք ընտանի են դարձել մարդու նեղ օրերին օգտակար լինելու յատուկ նպատակով, բացի խոհանոցային համադամ լինելուց, նաեւ՝ երկու ոտքը պատերազմում կորցրած գինուտորի ու նրա հարեւանների թոռներից փրկելու համար:

«Գրական Թեթր»

«ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆԸ ՓՐԿՈՒՄ Է ԱՇԽԱՐՀ, ԻՍԿ ՄԵՆՔ ՓՐԿՈՒՄ ԵՆՔ ԳԵՂԵՑԿՈՒԹԻՒՆԸ»

ԳՈՀԱՐ ԲՈՏՈՑԵԱՆ

Այս համոզմունքով է աշխատում Մոսկուայի «Մոսիտալմեդ» միջազգային բժշկական կենտրոնի բուժանձնակազմը «Ազգ»-ի այս տարուայ հրատարակումներից մեկում պատմել էինք ՌԴ մայրաքաղաքում ապրող եւ աշխատող բազմաթիվ հայ բժիշկների մասին, ովքեր տարիների իրենց վաստակով ու փորձառութեամբ կարողացել են ճանաչման արժանանալ: Իսկ բոլորովին վերջերս ներկայացրել էինք 2013 եւ 2014 թուականների արդիւնքներով ՌԴ առողջապահության նախարարութեան կողմից անընդմէջ առաջին պատուաւոր հորիզոնականը զբաղեցնող Մոսկուայի «Մոսիտալմեդ» միջազգային բժշկական կենտրոնի գործունէութիւնը, որի սեփականատէրը («Ռուսաստանի Դաշնութեան վաստակաւոր շինարար» վարդգէս Արծրունի) եւ գլխաւոր բժիշկը (բժշկական գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր Տիգրան Մարկոսեան) նոյնպէս մեր հայրենակիցներն են:

Ինչպէս ուրախութեամբ տեղեկացայ «Մոսիտալմեդ»-ի մասին հրատարակումը մեծ արձագանք է ունեցել Մոսկուայի հայ համայնքում (մեր հայրենակիցները ծանօթացել էին թերթի ինտերնետային տարբերակին), իսկ բուժաստատութեան մի քանի մշտական այցելուներ էլ խնդրել էին յաջորդանորդարձի դէպքում շեշտել ամենակարեւոր մասին «Մոսիտալմեդ»-ն այսօր Ռուսաստանում միակ կենտրոնն է, որը տալիս է ամենարագ եւ ճշգրիտ ախտորոշումը: Օրերս ես կրկին Մոսկվայի վարիթանգովի թատրոնի հարեւանութեամբ» Արքատի 28/1 հասցէում գտնուող բուժկենտրոնում էի, որտեղ հարիւր-հազարաւոր մարդիկ հաւատում են այստեղ աշխատող բժիշկներին եւ նրանց վստահում ամենաթանկը՝ կեանքն ու առողջութիւնը: Բուժաստատութեան ղեկավարութեանը ներկայացնելով նախորդ հրատարակման շուրջ առաջացած արձագանքը» փորձում եմ լսել աննախադէպ յաջողութիւնների հասնելու գաղտնիքը:

- Ցանկացած հիւանդութեան արդիւնաւէտ բուժումը մեծապէս կախուած է արագ, ճիշտ եւ ժամա-

նակին ախտորոշումից,- ասում է «Մոսիտալմեդ» միջազգային բժշկական կենտրոնի գլխաւոր բժիշկ, բժշկական գիտութիւնների դոկտոր, պրոֆեսոր Տիգրան Մարկոսեանը:

- Եւ շատ կարեւոր է արագ եւ ճշգրիտ ախտորոշելով՝ նուաճել մարդկանց հաւատն ու վստահութիւնը: Այսօր բժշկութիւնը մեծ արագութեամբ է զարգանում: Նորագոյն տեխնոլոգիաները ամէնից շատ ներդրում են այս բնագաւառում: Եւ ի պատիւ մեր սեփականատիրոջ՝ վարդգէս Արծրունու, ուզում եմ հպարտութեամբ նշել, որ Ռուսաստանեան ոչ դիւրին մրցակցութեան պայմաններում նա ամէն ինչ անում է ժամանակին համընթաց քայլերու եւ բուժտեխնիկական հագեցուածութիւնը միջազգային ընդունուած պահանջներին եւ չափանիշներին համապատասխանեցնելու համար: Եւ պատահական չէ, որ ՌԴ առողջապահութեան նախարարութեան կողմից 2 տարի անընդմէջ յաղթող ճանաչուող «Մոսիտալմեդ» միջազգային բժշկական կենտրոնն այսօր ունի բժշկական 31 մասնագիտացում, 1390 ծառայութիւն, օրական 1000 այցելութիւն, մշտական գրանցուած 164.000 յաճախորդ, 118 բժիշկ, որոնցից 35-ը բժշկական գիտութիւնների թեկնածու, 4-ը՝ դոկտոր, 3-ը ՌԴ վաստակաւոր բժշկի տիտղոսակիր...:

Բժշկական գործունէութեան լաւագոյն աւանդութիւններ ձեւաւորած մեր կոլեկտիւն իր գոյութեան տարիներին նուաճել է բարձր հեղինակութիւն եւ վստահութիւն՝ ինչպէս այցելուներին, այնպէս էլ Ռուսաստանում յայտնի մեր գործընկերների շրջանում: Մեր կենտրոնում, այցելուներին բազմակողմանի հետազօտելուց եւ հիւանդութիւնները կանխորոշելուց գատ, արեւում են նաեւ միկրոսկոպիկ վիրահատութիւններ, որից յետոյ հիւանդներին տեղափոխում ենք տուն եւ այնտեղ ստանձնում հետագայ խնամքը եւ՝ մարդկանց վերադարձնելով աշխատունակութիւնը: Կենտրոնում կատարւում են նաեւ կոսմետիկ վիրահատութիւններ եւ փոխպատուաստումներ: Մի խօսքով, այսօր մեր բուժաստատութիւնը ամուր եւ վստահ կանգնած է մարդու համար ամենարժէքաւորի՝ առողջութեան

ՏԻԳՐԱՆ ՄԱՆՍՈՒՐԵԱՆԸ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ԶՈՅԵՐՈՒ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԵՐԵ ԵՐԿ ՈՒՄ

ՀՀ ժողովրդական արտիստ երգահան Տիգրան Մանսուրեանը Հայոց Ցեղասպանութեան զոհերու յիշատակին նուիրուած իր գործերը պիտի ներկայացնէ ՀՀ նախագահի կողմէ ստեղծուած Ցեղասպանութեան 100-րդ տարելիցին նուիրուած ձեռնարկները համակարգող պետական յանձնաժողովին՝ համերգային երեկոյ կազմակերպելու համար: ՀՀ նախագահի հրամանագրով՝ երեք տարի առաջ ստեղծուած յանձնաժողովը կը նախապատրաստէ այն հիմնական ձեռնարկներուն շարքը, որոնք պէտք է իրականացուին 2015-ին ընդհանուր եւ 2015-ի ընթացքին: Այս մասին կը ներկայացնէ Armenpress.am-ը:

«Ես Հայոց Ցեղասպանութեան զոհերի յիշատակին նուիրուած երեք ստեղծագործութիւն ունեմ: Ալտի

եւ նուագախմբի կոնցերտ եմ գրել՝ «Երեք արիւս»՝ երգելու Արարատին բացուած պատուհանից» խորագրով: Գրել եմ եւս մի գործ՝ Թաւջուժակի կոնցերտ՝ «Ուր է Աբէլ եղբայրը քո» խորագրով: Բացի այդ, ունեմ նաեւ «Ռեքուիեմ»-ը, որը գրել եմ գերմանական ընկերութեան պատուէրով», - նշած է Մանսուրեանը:

Անուանի երգահանին խօսքով՝ այս երեք ստեղծագործութիւնները միասին կը կազմեն մէկ համերգ: «Պէտք է առաջարկեմ Հայոց Ցեղասպանութեան 100-րդ տարելիցին նուիրուած միջոցառումները համակարգող պետական յանձնաժողովին այդ գործերով համերգ կազմակերպել: Ի դէպ, գործերից Թաւջուժակի կոնցերտը Հաստատում դեռեւս չի հնչել», - աւելցուցած է երգահանը:

ԱՍՍԹԵՐՏԱՄԻ ՀԱՅՈՑ ԵՎԵՂԵՑԻՆ ՀԻՄՆՈՎԻՆ ՎԵՐԱՆՈՐՈՂՈՒԹԵԱՒ

Հոլանտայի Ամսթերտամ քաղաքին մէջ ճիշդ 300 տարի է ի վեր կը գործէ Հայոց Ս. Հոգի եկեղեցին, որ հիմնուած է 1714 թուականին: Տարիներու ընթացքին շրջանը հայրութենէ պարպուած է: Սակայն ներկայիս հոն կը բնակին 20,000 հայեր, որոնց կէսը հայաստանցիներ են: Արդէն անդամագրուած են 800 հայեր: Իսկ եկեղեցին Հոլանտայի իշխանութիւններուն կողմէ ընդունուած է որպէս պատմական հնութիւն եւ առ այդ կատարած են

անհրաժեշտ նորոգութիւնները: Նշենք նաեւ որ Հոլանտայի Ալմեյօ քաղաքին մջ կայ նաեւ հայկական եկեղեցի մըն ալ որ կը կոչուի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին:

Ներկայիս Ամսթերտամի Ս. Հոգին եկեղեցույ մէջ կը գործէ հինգ հոգիանոց թաղական խորհուրդ մը: Հոն ամէն կիրակի պատարագ կը մատուցուի ձեռամբ Մայր Աթոռ Ս. Էջմիածնէն ժամանած Տէր Տարօն Բնիկ թաղապետի:

պահպանման դիրքերում: Իսկ զներն էլ մատչելի են: Ունենք նաեւ գեղչային կայացած համակարգ, տարուայ ընթացքում գործում են բազմազան աղցիաներ, ղեկավարութիւնը սիրով ու պատրաստակամութեամբ հանդէս է գալիս բարեգործական ձեռնարկումներով... Եւ պատահական չէ, որ բժշկական ապահովագրական բազմաթիւ ընկերութիւններ նախընտրում են պայմանագրեր կնքել հենց մեր բուժաստատութեան հետ: Ունենք նաեւ բժշկական վերականգնողական մեր կենտրոնը, որը գտնուում է Մոսկուայի Տրիֆոնովեան փողոցում: Այնտեղ նոյնպէս հաւաքուած են փորձառու եւ բարձրակարգ մասնագէտներ, ովքեր տիրապետում են ժամանակակից բժշկութեան գիտելիքներին եւ գաղտնիքներին: Նրանց կուտակած փորձը լրացնում են ժամանակակից բուժարքաւորումները, որոնցով լիովին յագեցած է կենտրոնը: Եւ մեր այս մեծ ու համերաշխ կոլեկտիւի ղեկավարութեան առաջ-

նահերթ խնդիրը գործունէութեան հետագայ կատարելագործումն է, ձեռքբերումներով չբաւարարուելը, աշխատանքային բնականոն ութմի շարունակական կատարելագործումը: Մօտ առաջիկայում մենք կ'ունենանք նաեւ շտապօգնութեան ծառայութիւն եւ բժշկական անհետաձգելի օգնութիւն կը ցուցաբերենք մարդկանց: Նախատեսուած է նաեւ բացել ստացիոնար հիւանդանոց՝ յագեցած թէ բարձրակարգ մասնագետներով եւ թէ ժամանակակից պայմաններով ու սարքաւորումներով: Պլանաւորուած է ունենալ նաեւ մանկական պոլիկլինիկա...

Ուզում եմ կրկին հաւաստիացնել, որ մենք բոլորս զբաղուած ենք շատ կարեւոր առաքելութեամբ՝ հիւանդութիւնների արագ եւ ճշգրիտ ախտորոշումով՝ մարդկանց կեանք պարգեւելով, առողջութեան վերականգնմամբ: Ի վերջոյ, եթէ գեղեցկութիւնը փրկում է աշխարհը, ապա մենք՝ այստեղ հաւաքուածներս, փրկում ենք գեղեցկութիւնը...

ՆԱԽԱՃԱՇ

Կազմակերպութեամբ
Փաստինայի Փարամագ Մասնաճիւղի
Եւ Տիկնանց Օժանդակ Մարմնի

Տեղի կ'ունենայ
Կիրակի 16 Նոյեմբեր, 2014
առաւօտեան ժամը 9:00-ին

Կարօ Սողանալեան Սրահէն ներս
1060 N Allen Ave. Pasadena, CA 91107

Մուտք՝ \$15

OFFICE SPACE FOR RENT
IN PASADENA

ՎԱՐՁՈՒ ԳՐԱՍԵՆՆԵԱԿՆԵՐ
1060 North Allen Ave
Pasadena, CA 91104

Գրասենեակները վերանորոգուած
եւ յարմար վարձքերով
Հետաքրքրուողներէն հեռաձայնել՝
(626) 398-0506

ԸՆԿՈՅՁԸ ՕԳՏԱԿԱՐ Է ԱԼԶՅԱՅՍԸՐԻ ՏԱՌԱՊՈՂ ԱՆՁԵՐՈՒՆ

Նիւ Եորքի հետազոտութեան պետական հաստատութիւնը վերջերս մաս կազմած է բազմաթիւ հաստատութիւններու շարքին, որոնք ճիգ չեն ինայքի գնահատում ուսումնասիրութիւններ կատարելու: Ալզհայմըրը անհանգստութեան գծով: Յիշեցնենք, որ Ալզհայմըրը մտային անհանգստութիւն մըն է, որ սովորաբար ի յայտ կու գայ տարեցներու մօտ:

Ալզհայմըրը Կրիստին Կարոտի կողմէն մակարդակի նուազումը, մտածելու եւ յիշողութեան հետ կապուած հարցերը:

Ալզհայմըրը գծով կատարուած ամերիկեան նոր հետազոտութիւնը կը բաղկանայ շարք մը փորձարկումներէ կատարուած՝ մուկերու մասնակցութեամբ: Ըստ գիտնականներուն, ընկոյզով հարուստ սննդականոն ունեցող մուկերու մօտ նշմարելի էր սորվելու եւ յիշողութեան կարողութիւններու յառաջդիմութիւնը: Փորձարկումները նաեւ ցոյց կու տան թէ ընկոյզը նոյնքան օգտակար է մարմնի աշխուժութեան եւ անձկութեան (anxi-

ety) նուազեցման համար: Մուկերու պարագային, ընկոյզի օրական սպառումը կը հասնէր 28-էն 42 կրամի: Փորձագէտներուն համաձայն՝ փորձարկումը հիմնուած է նախապէս կատարուած հետազոտութիւններու վրայ, որոնց արդիւնքները ցոյց տուած են թէ ընկոյզի մէջ գտնուող նիւթերը կրնան օգտակար ըլլալ մարմնի եւ ուղեղի մահամերձ բջիջներու վերականգնումին: Ի դէպ, ընկոյզը հարուստ է Օմեկա-3-ով, որ կը նպաստէ ուղեղի բջիջներու պահպանման:

Ընկոյզը հատապտուղներէն էր, երկրորդ ամէնէն շատ հակաօքսիտացիոն նիւթեր պարունակող պտուղն է: Հետեւաբար, ընկոյզը ոչ միայն կը պաշտպանէ բջիջները այլ նաեւ կը դիմադրէ բորբոքումներու:

Նիւ Եորքի Հետազոտական Պետական Հաստատութեան կատարած այս փորձարկումներու մասին անդրադարձած է Journal of Alzheimer's Disease ամսագիրը, որ նշած է թէ ընկոյզը կրնայ յետաձգել Ալզհայմըրը անհանգստութիւնը:

Ո՞Ր ԴԵՊԵՐԸ ՆԵՐԿԱՅԻՍ ԱՄԵՆԵՆ ՇԱՏ ՎԱՆ ԿԸ ՅԱՌԱՋԱՅՆԵՆ ԱՄԵՐԻԿԱՅԻՆԵՐՈՒ ՄՕՏ

Չէքմէն համալսարանի հետազոտական ծրագիրներէն մէկուն ընդմէջէն գիտնականներ հետազոտութիւն մը կատարած են յայտնաբերելու համար Միացեալ Նահանգներու բնակիչներու մօտ հինգ ամէնէն շատ վախ յառաջացնող դէպքերը: Գիտնականները վախը գնահատած են մտահոգութենէն եւ անձկութենէն: Անոնք նաեւ մանրամասնած են իրենց հարցումները՝ անձնական վախի, ոճրագործութեան, եւ բնութեան աղէտներու հետ առնչուած վախերուն վերաբերեալ:

Մօտաւորապէս 1500 անձերու մասնակցութեամբ կատարուած հետազոտութիւնը ցոյց տուած է թէ ամերիկացիները ամէնէն շատ կը վախնան գիշերը առանձին զբօսնելէ: Հետազոտութեան համաձայն, հետեւեալ հինգ կացութիւնները ամէնէն շատ վախ կը պատճառեն ամերիկացիներուն.

- 1.Գիշերը առանցին զբօսնիլը
- 2.Ինքնութեան հետ կապուած փաստաթուղթերու գողութիւնը
- 3.Համացանցային անապահովութիւնը
- 4.Հանրային սպանութեան զոհ երթալու վտանգը
- 5.Հասարակական ճառ արտասանելը

Ըստ հետազոտութեան հեղինակներուն՝ այս հետազոտութիւնը պիտի կրկնուի ամէն տարի, որպէսզի գիտնականները կարենան բաղդատել ամերիկացիներու հոգեբանական վիճակը տարիներու ընթացքին եւ քննել անոնց վախի պատճառներուն փոփոխութեան ընթացքը: Հետաքրքրական են նաեւ ամերիկացիները ամէնէն շատ մտահոգող հինգ պայմանները, որոնք հետեւեալներն են.

- 1.Համացանցի միջոցով ինքնութեան գողութիւն

- 2.Ընկերութիւններու կողմէ համացանցի հսկողութիւն
- 3.Աղբաւորութիւն
- 4.Կառավարութեան կողմէ համացանցի հսկողութիւն
- 5.Անհանգստութիւններ եւ առողջապահական հարցեր Չէքմէն համալսարանի կողմէ կատարուած այս հետազոտութիւնը նաեւ պարզած է թէ ըստ ամերիկացիներու, Միացեալ Նահանգներու մէջ վերջին քսան տարիներու ընթացքին ոճիւրներու թիւը բարձրացած է: Սակայն ըստ պաշտօնական տուեալներուն, երկրին մէջ ոճիւրներու պարագաները նկատելիօրէն նուազած են:

Ամերիկացիներուն մօտ նաեւ վախ կը յառաջացնեն բնութեան աղէտներու հաւանականութիւնը: Ըստ հետազոտութեան հետեւեալ հինգ բնական աղէտները ամէնէն շատ վախ կը պատճառեն Միացեալ Նահանգներու բնակիչներուն մօտ.

- 1.Փոթորիկը
- 2.Երկրաշարժը
- 3.Ջրհեղեղը
- 4.Համաճառակները
- 5.Ելեկտրականութեան հոսանքի երկարատեւ ընդհատումը

Հակառակ իրենց ներկայացուցած վախի առաջնահերթութիւններուն, ամերիկացիներու միայն 25 առ հարիւրն է որ նախապատրաստուած է դիմազրուելու այս աղէտները: Գիտնականները դիտել կու տան թէ ամերիկացիներու մեծ մասը յաւելեալ ջուր, ուտելիք եւ բժշկական մատակարարումներ չունի: Անոնք նաեւ կոչ կ'ուղղեն այս ծիրին մէջ գործող կազմակերպութիւններուն որպէսզի յատուկ ծրագիրներ որդեգրեն թէ՛ տեղեկացնելու եւ թէ՛ ֆիզիքային նպաստելու ամերիկացիներուն:

ԻՆՉՊԵՍ ՄԻՇՏ ԲԱՐԵԿԱԶՄ ՄՆԱԼ ԱՌԱՆՑ ՍՆՆԴԱԿԱՆՈՒԻ

Հարկ չկայ դուք ձեզ տանջելու խիստ սննդականոններով կամ սովամահութեամբ: Հետեւեցէք այս հինգ կանոններուն, որոնք կ'օգնեն ձեզի միշտ բարեկազմ մնալու:

Ուտելէն առաջ խմեցէք մէկ գաւաթ ջուր: Հետազոտութիւնները ցոյց տուած են, որ ուտելէ առաջ 2 գաւաթ ջուր խմող մարդիկ քիչ ջերմութ կը հաւաքեն եւ շատ արագ կը նիհարանան:

Հետազոտողները ասիկա կը բացատրեն այնպէս, որ ջուրը կ'օգնէ վերահսկելու անօթնութեան զգացումը:

Ընկոյզ կերէք: Ընկոյզը կ'օգնէ երկար ժամանակ յագեցած ըլլալու զգացումը պահպանելու: Անիկա արեան մէջ չի բարձրացներ շաքարի մակարդակը, որուն շնորհիւ մարմնին մէջ ճարպեր չեն կուտակուիր:

Կուտակուիր: Ազատեցէք սնունդի թափանցիկ շիշերէն: Այդ ամանները, գտնուելով ձեր առջեւ, աչքը չեն կտրեր ուտելիքէն:

Աշխատանքի երթալէ առաջ այցելեցէք մարզասրահ: Գիտնականները ապացուցած են, որ ամբողջ օրը մտային աշխատանք կատարելէ յետոյ երեկոյան քիչ ուժ կը մնայ մարզանքով զբաղելու համար: Այդ պատճառով առաջադասան մարզումները աւելի օգտակար են եւ կ'աշխուժացնեն մարմինը:

Ուտելիքի վրայ պղպեղ ցանցէք: Մէկ թէյի դգալ կարմիր պղպեղ աւելցնելով՝ կ'օգնէք ձեր մարմնին աւելի շատ ջերմութ այրելու: Անիկա յատկապէս կարեւոր է աւելցնել իւրոտ եւ աղի ուտելիքներուն:

ՎԱՐԴԻ ԶՈՒՐԻ ՄԱՍԻՆ ԿԱՐԵՒՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

- Չափազանց օգտակար է մորթի առողջութեան
- Ունի բնական կազդուրիչ յատկանիշներ՝ մորթային զանազան ախտանշաններու
- կը գործածուի որպէս հականեխիզ եւ եռքերն (rash) ու փորփոքումները դարմանող միջոց
- կը նուազեցնէ դէմքի կնճիռներն ու գիծերը, ամրացնելով մորթը եւ անհետացնելով մեռած մորթն ու բջիջները
- Արեակիրգուած մորթը կը զովացնէ, ունենալով կազդուրիչ յատկանիշ եւ դէմքին սեւ կէտերը կը նուազեցնէ
- կը գործածուի անուշահոտութիւն մէջ
- կը գործածուի ածիւրեղէն ետք
- դէմքի բշտիկներու եւ անոնց հետքերու անհետացման համար վարդի ջուրը յարատեւ օգտագործումը շատ կը նպաստէ, կազդուրելով եւ առողջ պահելով դէմքը:

ԴԱՓՆԻ ՏԵՐԵԸ ԿՐ ՊԱՅՄԱՆԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԻՒՆԸ

Դափնի տերեւը, առանց որուն անհնար է պատկերացնել շատ համեղ ճաշեր, սկզբնական շրջանին խոհարարութեան մէջ ընդհանրապէս չէ օգտագործուած:

Դարեր շատունակ դափնի ճիւղերէն պատրաստուած պսակներով զարդարած են յոյն ողիմպիական յաղթողները: Միայն հարիւրամեակներ անց՝ աշխարհը իմացաւ դափնի տերեւի օգտակար յատկութիւններուն մասին:

Խոհարարութեան մէջ օգտագործուելէ շատ աւելի ուշ՝ դափնի տերեւները սկսան կիրարկել նաեւ դիմաշարդարման մէջ: Անոնց թուրմը կ'օգտագործուի ամենատարբեր դիմակներու պատրաստման, մագերուկ փայլ տալու, մարմնի ամրացման, ինչպէս նաեւ մաշկի երիտասարդացման համար:

Մաշկը նուրբ դարձնելու, երիտասարդ պահելու համար ձեզի կ'օգնէ այս հեղուկը:

Առէք 200 կրամ դափնի տերեւ եւ զայն 3 վայրկեան եռացուցէք 100 կրամ ջուրի մէջ: Զգեցէք թրմուի 1 ժամ: Այնուհետեւ ստացուած հեղուկով շփեցէք դէմքի եւ պարանոցի մաշկը:

Քանի մը օր կրկնելէ յետոյ ձեր մաշկը պիտի դառնայ աւելի նուրբ եւ առաձգական:

ԿԻՆԵՐ ՊԵՏՔ ԶԵ ԶՐԱԺԱՐԻՆ ՇԱՔԱՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԵՆ

Շատ կիներ, տարուած կատարեալ կառուցուածք ունենալու մոլուցքն են, լիովին կը հրաժարին շաքարէն՝ զայն հանելով իրենց սննդակարգէն: Բայց մի՞թէ ատիկա անվտանգ է:

Ամերիկացի գիտնականները պարզած են, որ շաքարէն բացարձակ հրաժարիլը կրնայ անուղղելի վնաս հասցնել առողջութեան: Շաքարը ոչ միայն ցանկալի է, այլ նաեւ պարտադիր պայման մարմնի կանոնաւոր գործունէութեան համար:

Շաքարին մէջ առկայ նիւթերը օգտակար են եւ կ'ապահովեն մարմնին անհրաժեշտ ուժանիւթը: Շաքարը օգտակար է, ինչպէս ուղեղի բնականոն աշխատանքին, այնպէս ալ մկանային համակարգին համար: Յաղթահարել մտային եւ ֆիզիքական ծանրաբեռնութիւնը՝ առանց շաքարի օգտագործման անհնար է, հետեւաբար պէտք չէ ամբողջովին հրաժարիլ այդ մթերքէն: Համեմատաբար ընդունելի է շաքարի օրական պահանջարկի օգտագործումը 30-40 տոկոսով կրճատելը, որպէսզի ե՛լ չգիրնաք, ե՛ւ պահպանէք մարմնին անհրաժեշտ շաքարի քանակը:

Save Support Sustain

Syrian Armenian Relief Fund
P.O. Box 1948
Glendale, CA 91209-1948

www.syrianarmenianreliefund.org

HayastanInfo.net

Ամեն ինչ պատրաստ է իշխանափոխութեան համար

Շարունակուած էջ 2-էն

ինքն իրեն տեղի չի ունենում, այլև, չգիտես ինչու, կազմուած է ճանապարհային քարտէշ, իշխանափոխութիւնը կարծէք թէ դիտաւորեալ ձգձգելու համար: Սա էլ անուղղակի հակասութեան մէջ է մտնում հարթակի ելույթների հետ, որոնք ողղակի ազդակուած են Հայաստանի կործանման մասին: Ինչպէ՞ս կարող է ուժը յայտարարել Հայաստանի կործանման, աղէտալի վիճակի մասին եւ, միեւնոյն ժամանակ ունենալով իշխանափոխութեան գրեթէ լիակատար անհրաժեշտ գործիքակազմ, օր առաջ չիրականացնել այդ իշխանափոխութիւնը:

Բացատրել դա նրանով, որ Հայաստանին ցնցումներ, մայրդաններ եւ այլն պէտք չէ, անհիմն է թուում, որովհետեւ եթէ կայ աննախադէպ համախմբում, ապա էլ ո՞վ պէտք է ցնցում անի, ինչպէ՞ս կարող է հակայական մեծամասնութիւնը համախմբուածութեան դէպքում ցնցումներից վախենալ: Կը նշանակի, հետեւու-

թիւնն այն է, որ կամ իրականում չկայ համախմբուածութիւնը, կամ չկայ իշխանափոխութեան ցանկուածութիւն՝ առնուազն այսօր: Կամ ցանկուածութիւնը կայ, սակայն իրականում իշխանափոխութեան նախընտրելի մեխանիզմը հասարակական աջակցութիւնը չէ, այլ այդ աջակցութիւնը գործիք է՝ պահանջուած մեխանիզմին հասնելու համար:

Այսինքն՝ Հայաստանում իշխանափոխութեան համար նախադրեալներն իրականում այսբերո՞ղ են, որոնց անտեսանելի, այսինքն՝ ջրի տակ գտնուող մասնաւելի մեծ է, քան այն, ինչ երեւում է ջրի երեսին: Եւ որպէս կանոն, ճակատագրական նշանակութիւն ունենում են հենց ջրի տակ գտնուող մասերը, որոնք, սակայն, հասարակութեան աչքից ու ականջից հեռու են, այսինքն՝ հասարակութեանը հաշուետու չեն, եւ նման դէպքերում իշխանափոխութեան գործընթացը հասարակութեան համար, ըստ էութեան, վերածում է մութ սենեակում սեւ կատուի որոնումների: «ԱՌԱՋԻՆ ԼՐԱՏՈՒԱԿԱՆ»

ՅՈՒՇ ԵՐԵԿՈՅ ՆՈՒԻՐՈՒՄՈՒՍ ՎԱՉԳԵՆ Ա. Ի

Շարունակուած էջ 7-էն

Գեղարդավանքը եւ բազմաթիւ ա՛յլ շինութիւններ:

1988ի Փետրուար 25ին Հայաստանի հետ Արցախի վերամիաւորման հարցով Վազգէն Ա. դիմած է Միխայէլ Գորբաչովին, Արցախեան շարժման ընթացքին խորհրդային եւ միջազգային բարձր ատենաներուն լսելի դարձնելու համար Արցախահայութեան ձայնը: Հայրապետական առանձին տնօրինութեամբ 1989ին վերահաստատուած են Արցախի թեմը, ձեռնարկուած են Արցախի եւ շարք մը եկեղեցիներու եւ վանքերու վերաբացումն ու վերանորոգումը: Իր ջանքերով սկսած են գործել Սիւնիքի եւ Գուգարքի թեմերը:

Վեհափառ Հայրապետը օրհնած է Հայաստանի վերանկախացումը: 1991ի Սեպտեմբեր 29ին կատարած է Սրբալոյս Միւռնոյի Օրհնութիւնը եւ զայն անուանած է «Անկախութեան Միւռնոն»: Իսկ 1992ի Մայիս 28ին յատուկի կոչով դիմած է Հայց. Եկեղեցւոյ բոլոր թեմակալ Առաջնորդներուն՝ սատարելու համար «Հայաստան» Համահայկական Հիմնադրամի ստեղծման:

Հայրապետին վերջին երախտաշատ գործը եղաւ 1992ին հողի օրհնութիւնը կատարել Երեւանի նոր կառուցուելիք յոբելյանական Մար Եկեղեցիին: Ճարտարապետներ 22 նախագիծեր ներկայացուցին Երանաշնորհ Հայրապետին եւ ինք ընտրեց Ստեփան Քիւրքճեանի նախագիծը եւ ըսաւ. «Իմ հոգու աչքերով տեսնում եմ տաս տարի անց հոյակերտ տաճարի կառուցումը՝ վերասլաց խաչով դէպի երկինք: Գուցէ այդ օր ես հոս չեմ լինելու, եւ սակայն գուցէ չիլէք զիս»: Այդ եղաւ Հայրապետին վերջին կտակը:

Վազգէն Ա. Վեհափառ Հայրապետը հովուապետական այցելութիւններ կատարած է արտասահմանի հայ թեմերու եւ համայնքներու, ինչպէս նաեւ յատուկ այցելութիւններ կատարած է քրիստոնեայ եկեղեցիներու հոգեւոր պետերուն, որոնք մօտէն ծանօթացած են Մայր Աթոռի հոգեւոր առաքելութեան:

1991ին ընտրուած է ՀՀ ԳԱԱ պատուաւոր անդամ, 1994ին Հայաստանի Հանրապետութեան մէջ առաջինը եղած է որ արժանացած է Ազգային հերոսի կոչման: Վազգէն Առաջինի անունով կոչուած են Սեւանի Հոգեւոր Դպրանոցը եւ դպրոց՝ Վանաձորի մէջ, իսկ 2008ին յուշարձաններ գեղարդուած են Վազգէնեան Հոգեւոր Դպրանոցի բակին մէջ եւ 2010ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի բակին մէջ:

Յուցադրուեցաւ Վազգէն Վեհափառ Հայրապետի կեանքը ներկայացնող տեսաերիզ մը, որ սքանչելի կերպով պատրաստուած էր: Ներկաները չափազանց խոր տպաւորութիւններ ունեցան՝ տեսնելով իր մանկութենէն մինչեւ հայրապետութիւնը եւ գործունէութիւնները:

Արմէն Յովհաննիսեան սքանչելի կերպով կատարեց «Ձօն Ընկերը», իսո՞ք՝ Մ. Մինասեանի եւ երաժշտութիւն Ս. Պասկեւիչեանի, ինչպէս նաեւ «Խօսք Հայրական», իսո՞ք՝ Մ. Մինասեանի եւ երաժշտութիւն Ս. Պասկեւիչեանի:

Յուցադրուեցաւ նաեւ կարծ տեսաերիզ մը Վեհափառ Հայրապետի գործունէութեան մասին, ուր Հայաստանի Հանրապետութեան Առաջին Նախագահ՝ Վսեմաշուք Լեւոն Տէր Պետրոսեան Մայր Աթոռ այցելելով Հայաստանի Հանրապետութեան առաջին անցագիրը յանձնեց Վեհափառ Հայրապետին, ուրուն ներկայ էր նաեւ Գեւրգ. Տ. Յովնան Արքեպիսկոպոս Տէրտէրեան:

Հանրաձանօթ եւ սիրուած ասմունքող Նունէ Աւետիսեան տպաւորիչ կերպով արտասանեց Ա. Իսահակեանի «Կտակ»ը եւ Յ. Շիրազի «Մայրական Ծարք»ը բանաստեղծութիւնները: Հայիվուտի Սուրբ Յովհաննու Կարապետ Հայց. Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ եւ Հարաւային Գաղիֆորնիայի Առաջնորդական Փոխանորդ՝ Արժ. Տ. Մանուկ Աւագ Քհնյ. Մարգարեան եւ Բրշ. Քերոք Սրկ. Արթիսեան, որոնք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Գէորգեան Հոգեւոր ձեմարանին մէջ աշակերտած են Վեհափառ Հայրապետին, իրենց մի քանի յուշերը պատմեցին ներկաներուն:

ՀԱՅԿԱԿԱՆ ԾԱՂԿԱՍԱՅԼԻ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆԸ

Շարունակուած էջ 7-էն

Քհնյ. Փեթրոյեանը որ ներկայացնէ իր սրտի խօսքը:

Տէր Սարգիս դիտել տուաւ որ վարդերու Փառատօնի «Ներշնչող Պատմութիւններ» (Inspiring Stories) թեման լաւագոյնս կը դրսեւորէ մեր ծաղկասայլը, մեր ժողովուրդի գոյատեւումով ու բազմաթիւ խոչընդոտներ հարթելով՝ մեր օտար այս ափերու վրայ՝ ձեռք ձգած բազմաթիւ յաջողութիւններով: Ան ապա օրհնեց սեղանները եւ բարի ախորժակ մաղթեց բոլորին:

Օրուան հանդիսավարն էր հեռատեսիլի հողորդավար հայագրի ձիւ Սիմոնեանը: Ան ծնած է Ֆրէզնօ եւ այժմ կ'ապրի Լա Գանիատայի մէջ՝ իր ամուսինին եւ երկու դուստրերուն հետ: Ան անսասմանօրէն ուրախ էր որ մանկութեան իր երազը կ'իրականանար հայկական այս ծաղկասայլով եւ կը յուսար որ օրին մէկը իր երկու դուստրերէն մին կ'արժանանայ վարդերու Փառատօնի «Իշխանուհի» կոչումին եւ այսպիսով մաս կը կազմէր այդ շքերթին...

Գեղարուեստական յայտագրին մաս կը կազմէին տեղեկագրական կարծ տեսաներիզ մը՝ պատրաստուած Ստեփան Փարթամեանի կողմէ, կատակախօսներ Արա Պասիլ եւ Մայքըլ Բէշըն ու երգերու մեկնաբանութեամբ՝ Լուսի Քէնեան երեակը, որուն կ'ընկերակցէր երաժշտական Նարթէքս խումբը:

Հակիրճ կերպով ելույթ ունեցաւ Ուաշինկիթընի ներկայացուցիչներու Տան անդամ ձուտի Զու, որ կը ներկայացնէ Քալիֆորնիոյ 27րդ ընտրաշրջանը: Ան իր ուրախութիւնը յայտնեց որ վարդերու Շքերթին առաջին անգամ ըլլալով կը մասնակցէր հայ ժողովուրդը իր իւրաքանչեւ ծաղկասայլով եւ յաջողութիւն մաղթեց կազմակերպիչ յանձնախումբին: Հանդիսութեան մասնակի ժամով ներկայ էր նաեւ Փաստինայի սիրուած քաղաքապետ ՊիլՊօկարտը:

Հանդիսութեան ընթացքին յատուկ պատիւի արժանացան հետեւեալ անձնաւորութիւնները: 1915-ի

վարդերու Շքերթին Գերագոյն Արարողապետ (Grand Marshal) Մովսէս Բաշկեանի ծոռը Բամբլա Նէք, 2006-ի վարդերու Շքերթին իշխանուհի Ռէյչըլ Կիրակոս, ինչպէս նաեւ 1952-ի Քալիֆորնիոյ Սթէնֆըրտ համալսարանի ամերիկեան ֆուլթայի խումբին՝ որ մասնակցեցաւ Rose Bowl-ի աւարտական խաղին, հինգ հայ անդամները: Անոնք էին Ջաք Էսկէեան, Հէրի Ղուկասեան, Նօրմ Մանուկեան, Լէն Գաբրիէլեան եւ Կէրի Գրիգորեան: Ասոնցմէ երկուքը անձամբ ներկայ էին, ներկայ էր նաեւ Լէն Գրիգորեանի կողակիցը:

Հանդիսութեան աւարտին խօսք առաւ Հայկական Ծաղկասայլի Կազմակերպիչ Յանձնախումբի Ատենապետ Խաչիկ Շահինեանը: Ան շնորհակալութիւն յայտնեց բոլոր նուիրատուներուն, յանձնախումբի անդամներուն, կամաւոր աշխատողներուն եւ նաեւ բոլոր ներկաներուն: Ան ապա ծաղկեփունջով մը պատուեց օրուայ համաատենապետներ Փլօրա Տունայեանցն ու Մարկրիթ Մորոպեանը, իսկ օրուայ հանդիսավար ձիւ Սիմոնեանն ալ ստացաւ գնահատական յատուկ զիր մը՝ յայտագիրը անթերի եւ սահուն կերպով վարելուն համար:

Օրուայ մեծագոյն անակնկալը վերապահուած էր վերջաւորութեան՝ երբ Խաչիկ Շահինեան հպարտութեամբ յայտարարեց որ Հայկական Ծաղկասայլին վրայ իրենց մասնակցութեամբ մեզ պիտի պատուէին Քալիֆորնիոյ նախկին Կարապետի ձորճ Տէքսթէճեանն ու իր համեստափայլ Տիկինը Կլօրիան, ինչպէս նաեւ օրուայ կազմակերպիչ յանձնախումբի համաատենապետ Փլօրա Տունայեանցը, Դաշնակցային կարավառական դատաւոր Սամուէլ Տէր Եղիայեանն ու պասքէթպօլի հուշակաւոր եւ սիրուած մարզիչ ձէրի Թարխանեանը՝ որ անձամբ ներկայ էր հանդիսութեան՝ իր զաւկին, հարսին եւ եղբոր հետ:

Վարձքը կատար բոլորին եւ կը տեսնուինք յառաջիկայ Յունուար 1-ին:

Երգչուհի Սալբի Մալիլեան խանդավառութիւն ստեղծեց իր երգած երկու երգերով, որոնք են «Հայրենի Երկիր», իսո՞ք՝ Ա. Պետրոսեանի, երաժշտութիւն Ռ. Ամիրխանեանի եւ «Միասնութեան Ծոռը Վարդ», իսո՞ք՝ Ս. Յարութիւնեանի եւ երաժշտութիւն Լ. Սարիբեկեանի:

Փակման խօսքին մէջ Առաջնորդ Սրբազան Հայրը անդրադարձաւ 1976ին որպէս Գէորգեան Հոգեւոր ձեմարանի սան Վեհափառ Նորին Սրբութեան հետ, որ խոր տպաւորութիւն ձգած էր իր վրայ եւ տակաւին այդ տեսարանը թարմ էր իր մտքին ու հոգիին մէջ: Շնչոյց նաեւ 1980 թուին Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարին մէջ Վեհափառ Հայրապետի ձեռամբ իր Քահանայական Ձեռնադրութիւնն ու Օծումը եւ տասը տարի յետոյ Եպիսկոպոս Օծումը, ինչպէս նաեւ մինչեւ Նորին Սրբութեան վախճանումը Հայաստան կատարած իր

այցելութիւնները եւ ականատես դառնալը Վեհափառ Հայրապետի գործունէութիւններուն

Հանդիսավար Տօքթ. Սիմոն Սիմոնեան ամենայն ձեռնհասութեամբ կատարեց իր պարտականութիւնը, ներկաներուն ծանօթացուց յայտագրի մաս կազմողները, շնորհակալութիւն յայտնեց Առաջնորդ Սրբազան Հօր, «Ձուարթնոց»Մշակութային Յանձնախումբի անդամներուն եւ բոլոր ներկաներուն, որոնք իրենց ներկայութեամբ ոգեկոչեցին 20րդ դարու մեծագոյն Հայրապետեանէն Երջանկայիչատակ Տ. Տ. Վազգէն Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի կեանքն ու հոգեւորազգային առաքելութիւնը:

Ներկաներուն բաժնուեցաւ Առաջնորդ Սրբազան Հօր հեղինակած «Ապրուած կեանքի Յուշեր», Հոգեշունչ Մանրապատումներու Ամբողջական Հաւաքածոյ զիրքէն, ուր արձանագրուած են աւելի քան տասը յուշապատումներ՝ նուիրուած Վազգէն Վեհափառին:

Ձեր Ծանուցումները Վստահեցէք
«Մասիս» Շարաքաթերթին
T: (626) 797-7680 F: (626) 797-6863
Email: massis2@earthlink.net

ՈՉ ԵՄ Է ԸՆԿ. ՅԱԿՈԲ ԱՂԱՄԵԱՆ

Ցառով իմացանք Լոնտոնի մէջ, Մեծն Բրիտանիոյ վարիչ Մարմնի անդամ՝ Ընկ. Յակոբ Աղամեանի կանխահաս մահը (44 տարեկան), յետ կարճատեւ հիւանդութեան:

Ընկ. Յակոբ Աղամեան զաւակն է յայտնի մտաւորական եւ երկարամեայ Ս.Դ.Չ. Կուսակցութեան Կեդրոնական վարչութեան նախկին անդամ Ընկ. Մանուէլ Աղամեանին:

Ողբացեալ Ընկ. Յակոբ Աղամեան ամուսնացած է եւ ունի երկու անչափահաս զաւակներ:

Ան իր նախնական ուսումը ստացած է Կիպրոսի Մելքոնեան կրթական հաստատութեան մէջ որմէ ետք իր մասնագիտական ուսումը շարունակած է Հայաստանի մէջ:

Այս տխուր առիթով Արեւմտեան Ամերիկայի Հնչակեան մեծ ընտանիքը եւ «Մասիս» շաբաթաթերթը իրենց խորին ցաւակցութիւնները կը յայտնեն ողբացեալ ընկերոջ աչրիին, ծնողքին՝ Տէր եւ Տիկ. Ընկ. Մանուէլ Աղամեաններուն, հարազատներուն ինչպէս նաեւ Մեծն Բրիտանիոյ Հնչակեան ընկերներուն:

ՅԱԿԿՅԱԿԱՆ ԳՐՈՒԹԻՒՆԸ ԸՆԿ. ՄԱՐՍԷԼ ԲԵՕՇԿԵՐԵԱՆԻ ՄԱՐՈՒԱՆ ԱՌԹԻ

Սրտի անհուն կսկիծով իմացանք Ուրուկուէյի Սոց. Դեմոկրատ Հնչակեան Կուսակցութեան վարիչ Մարմնի ատենապետ՝ ընկ. Մարսէլ Բէօշկերեանի անժամանակ մահուան գոյժը:

Այս տխուր առիթով մեր խորազգաց վշտակցութիւնները հանգուցեալի աչրիին, շրջանի վարիչ Մարմնին եւ համայն պարագաներուն:

ՍԴ-ԿԿ ԱՐԵՒՄՏԵԱՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՎԱՐԻՉ ՄԱՐՄԻՆ

ՅԱԿԿՅԱԿԱՆ

Ընկ. ՅԱԿՈԲ ԱԴԱՄԵԱՆԻ մահուան տխուր առիթով «Մասիս» շաբաթաթերթի խմբագրութիւնն ու անձնակազմը իրենց խորազգաց վշտակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի աչրիին, ծնողքին Տէր եւ Տիկ. Ընկ. Մանուէլ եւ Լիլիթ Աղամեանին եւ համայն հարազատներուն:

ՅԱԿԿՅԱԿԱՆ

Ընկ. ՅԱԿՈԲ ԱԴԱՄԵԱՆԻ վարահաս մահուան տխուր առիթով Տէր եւ Տիկին Պետրոս Մէֆէրեան իրենց խորազգաց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի համայն հարազատներուն եւ պարագաներուն, յատկապէս ծնողքին՝ Տէր եւ Տիկին Մանուէլ եւ Լիլիթ Աղամեանին: Առ այդ փոխան հեռագրի, \$100 տոլար կը նուիրեն «Մասիս»ին:

ՅԱԿԿՅԱԿԱՆ

ՅՈՎՄԵՓ ԱՍԱՏՐԵԱՆԻ եւ ՆԱԶԱՐԻԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆԻ մահուան տխուր առիթով Տէր եւ Տիկ. Սեդրակ եւ Ալին Աճէմեան իրենց խորազգաց վշտակցութիւնները կը յայտնեն հանգուցեալներու համայն հարազատներուն, մասնաւորաբար Տէր եւ Տիկ. Յարութ եւ Ռոզին Տէր Դաւիթեան եւ Տէր եւ Տիկ. Ոսկի եւ Կարինէ Ղազարեանին: Առ այդ \$500 տոլար կը նուիրեն «Մասիս»ին:

ՄԵԾԱՐԱՆՔԻ ԵՐԵԿՈՅ Ի ՊԱՏԻՒ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԱՖԵԱՆԻՆ

Շարունակուած էջ 16-էն

եանները: Նման փորձ մը կատարելու մասին մտածելն անգամ այս պահուստ հաւատացէք կը յուզէ զիս եւ վստահ եմ որ պիտի յուզէ նաեւ այսօրուան մեծարեալը, որովհետեւ այդ փորձը մեզի պիտի յիշեցնէ վաստակը Մինաս Չաւուչի, Բիւզանդ Մելքոնեանի, Ասատուր Կիւլ-Վարդեանի, Լեւոն Գուտուզեանի, Սարգիս Գիւլիշեանի, Սարգիս Ծիւրումեանի, Հայկարամ Գալինճեանի, Գրիգոր Լաջինեանի եւ զեռ բազմաթիւ ուրիշներու նման տիպարներու, զորս ճանչցած ենք եւ որոնք իրենց կատարած նուիրեալ աշխատանքին համար մեծարուելու բախտը չունեցան:

Տիգրան Սարաֆեանին վաստակը շատ լայնածիր է, որովհետեւ Հայ Մարմնամարզական Միութիւնը, որուն յառաջապահ դրօշակակիրներէն մէկը եղաւ ան, այն ալ քսան տարի անընդմէջ, մինչեւ 1981, այնուհետեւ ալ մինչեւ 2002՝ որպէս ՀՄՄ-ի Կեդրոնական վարչութեան ատենապետ, այդ ՀՄՄ-ը իր տեղն ու դերը ունեցած է ընդհանրապէս լիբանանահայութեան եւ մասնաւոր

որբար անոր համարեա բոլոր մարզերուն մէջ կազմաւորման ու գոյերթին պատմութեան մէջ: Որովհետեւ, Հ.Մ.Մ. ի ղեկավար ըլլալ նշանակած է ինքնա բերաբար ընդգրկուել այդ բոլոր մարզերուն մէջ՝ սկսեալ անշուշտ մարզականէն եւ սակայն մարզականի պիտակին տակ՝ տարածուելով ազգային, քաղաքական, կուսակցական, մշակութային եւ ասոնց յարակից բոլոր մարզերուն: Այդպէս եղած է գէթ մինչեւ վերջին երեք տասնամեակներուն, որուն երկուքին մասնաւորապէս մարզական եւ ընդհանրապէս միութենական, ազգային-կուսակցական դերակատարներէն մէկը եղած է Տիգրան Սարաֆեանը: Ան՝ ՀՄՄ-ի Հայկապի փառահեղ սկսուածութեան աստիճաններէն բարձրանալով՝ 1960-ական տարիներուն Լիբանանի մէջ հասած է Միութեան ղեկավարի պաշտօնին, որուն գուզահեռ եղած է Հնչակեան կուսակցութեան Լիբանանի ղեկավար մարմնի վարիչ Մարմնի անդամ, անոր ներքին դիւանի վարիչ՝ այն ալ 1975-ի Լիբանանեան պատերազմի սկզբնաւորութեան յաջորդող փոթորկալի տարիներուն: Այնուհետեւ նոյնիսկ կուսակցութեան

Կեդրոնական վարչութեան անդամ՝ 1985-1990 տարիներուն:

Ներքին դիւանի վարիչ ըլլալ 1975-ին, երբ կը պայթէր քաղաքացիական պատերազմը երկրին մէջ, ընթացիկ կամ սովորական պաշտօն մը չէր: Այս իրողութիւնը հաստատելու համար, այս պահուստ պիտի գոհանամ յիշատակելով միայն գաղութին համար այն փրկարար դերը զոր այդ օրերուն ստեղծուած միջկուսակցական համակարգիչ մարմինը խաղցած՝ դրական չէզոքութեան քաղաքականութեան կիրարկումին շնորհիւ՝ հայկական անխտիր բոլոր շրջանակներուն մէջ համախոհութեան ու համերաշխութեան միջոցով ստեղծուածին մէջ: Իսկ վեցանգամ այդ մարմնին ներս տիրական ներկայութիւն էր Տիգրան Սարաֆեանը իբրեւ Հնչակեան կուսակցութեան ներկայացուցիչ, վաղելով միւս կուսակցութիւններու ներկայացուցիչներուն վստահութիւնն ու յարգանքը:

Ըլլալով «ԱՐԱՐԱՏ» օրաթերթի խմբագիր, չեմ կրնար չյիշել նաեւ «Արարատ» ի վաստակաւոր տնօրէն Օննիկ ճամպուլեանին ինդրանքով՝ օրաթերթին Հալէպի եւ Դամասկոսի մէջ տարածումին ի ինդիր Տիգրան Սարաֆեանին կատարած արդիւնաշատ աշխատանքը 1981-ին:

Չեմ կրնար չյիշել այսօրուան մեծարեալին ու անոր գործակիցներուն հեռատես ու շրջահայեաց միջամտութիւնները՝ լիբանանեան մարզական կեանքը եւ յատկապէս մարզական պաշտօնական մարմինները կամ այլպէս կոչուած ֆետերասիոնները, մասնաւորաբար ֆութպոլի ֆետերասիոնը քաղաքականացնող սադրանքներու ու գձուձ հաշիւներու հետեւանքներէն իր միութիւնը գերծ պահելու համար:

Չեմ կրնար չյիշել ՀՄՄ-ը դէպի Մայր Հայրենիք՝ Հայաստան նետուած կամուրջ դարձնելու անոր աշխատանքը, որ նուիրագործուեցաւ ՀՄՄ-ի ինստիտուտի հանդիսաւոր նշումով Սփիւռքի Հետ Մշակութային Կոմիտէի դահլիճին մէջ: ՀՄՄ եղաւ սփիւռքահայ առաջին միութիւնը որուն յոբելեանը պաշտօնապէս կը նշուէր Հայաստանի մէջ, 1971-ին:

Չեմ կրնար չյիշել ՀՄՄ-ով խանդավառ համակիրներու - հայ եւ արաբ - շրջանակը ընդարձակելու աշխատանքը, որուն բարեբար արդիւնքը զգացի անձնապէս ես, երբ 1984-ի Օգոստոսի 19-ին շարագործ ձեռքերու կողմէ այս ակումբի ակադեմիան համար դրամահաւաքի ձեռնարկեցի անգուզական ֆութպոլիստ, նոյն քան անգուզական ՀՄՄ-ական Մարտիկին հետ:

ՀՄՄ-ի կեանքին մէջ Տիգրան Սարաֆեանին հետ առնչուած լիչաբժան եղելութիւններուն շարքը երկար է: Բայց, այս բոլորով հանդերձ, ինչպէս տեղի կ'ունենայ ընդհանրապէս հայկական իրականութենէն եւ ժողովրդավարական սկզբունքով գործող կառույցներէն ներս, Տիգրան Սարաֆեան ունեցաւ իր ընդդիմախօսները: Բայց այսօր, կրնամ վստահեցնել որ տարակարծութիւնները նպատակին շուրջ չեղան երբեք, այլ գործելատեղին: Որովհետեւ նպատակը՝ հիմնուած էր Հնչակեան 20 նահատակ հերոսներուն կողմէ շուրջ դար մը առաջ պատգամուած այն ազգային գաղափարախօսութեան վրայ, որուն հաւատարիմ ծառայողներէն էին թէ՛ Տիգրան Սարաֆեանը եւ թէ՛ իրեն ընդդիմախօսները: Բոլորը, հաւատարապէս, հաւատարիմ էին

ՀՄՄ-ի կոչումին՝ դարձնելու Քսաններուն յաջորդող քսան հազարներու բանակին յառաջապահ ուժը: Բոլորը, անխտիր բոլորը, հաւատարիմ էին ՀՄՄ-ի առաքելութեան մարզական թէ՛ երիտասարդական, մշակութային թէ՛ բարեսիրական միութիւններու ճամբով նորահաս սերունդներուն մօտ վառ պահելու իրենց ինքնութեան գիտակցութիւնը եւ այդ գիտակցութենէն թելադրուած ազգային ապրումներն ու ոգին: Տարբեր գործելատեղիներ չէին կրնար նպատակէն շեղելու պատրուակ դառնալ երդուեալ մարդոց: Եւ մեր ժողովուրդի գրկանքներէն, տառապանքէն ու նահատակութենէն ծնունդ առած գաղափարախօսութեան հաւատարմութիւն ուխտած գործիչներ էին բոլորը:

Այս պահուստ չեմ կրնար յարգանքով չյիշել նաեւ այդ գործիչներու կողքին կանգնած իրական սեռի մեր աննման ներկայացուցիչները, մայրերն ու կիները, ինչպիսին եղաւ Տիկին Վարդուհին՝ իր ամուսնոյն կողքին, ստունէն անոր յաճախակի բացակայութիւններուն իր հանդուրժողութեամբ եւ համբերութեամբ մանաւանդ:

Այս հանդիսութիւնը հրապարակաւ «ՎԱՐՁՔԻ ԿԱՏԱՐ» ըսելու ձեւ մըն է անշուշտ մարդու մը, որ վստահ եմ ինծի պէս պիտի մտածէ որ իր անձին ընդմէջէն երախտագիտական այդ արտայայտութիւնը պիտի երթայ նաեւ իրմէ առաջ, իրեն ժամանակակից եւ ինչու չէ նաեւ իրմէ ետք ՀՄՄ-ին եւ ՀՄՄ-ին ճամբով Ազգին եւ գոյց՝ որդեգիր ու մայր հայրենիքներուն, Լիբանանին ու Հայաստանին ծառայութեան նուիրեալներուն: Պիտի աւարտեմ խօսքս, ընկեր Տիգրան, ՀՄՄ-եան ընտանիքի «վարձքը կատար» լին վրայ աւելցնելով քաջառողջութեան եւ արեւշատութեան մաղթանքս, որպէսզի շարունակես եւ լրումին հասցնես ՀՄՄ-եան յուշադրութիւնը: Ան շօշափելի ժառանգող պիտի ըլլայ համայն ՀՄՄ-ականներուն, որոնք այդ յուշերու ընթերցման ընդմէջէն տեղեկանալով Միութեան պատմութեան վրայ իրենց դրոշմը ձգած դէպքերուն ու դէմքերուն, միաբերան պիտի ըսեն «վարձքը կատար՝ վեթերան ընկեր»:

Ապա տեղի ունեցաւ յուշատախտակի սուղութեան արարողութիւնը, որուն արժէքը Մալեան ոչինչ նկատեց՝ վեթերան ընկերոջ տասնամեակներու գործունէութեան հետ համեմատած, այլ պարզապէս միջոց մըն է ՀՄՄ Պէլլութի եւ ներկայ սերունդին երախտագիտութիւնը յայտնելու անոր եւ իտատանալու, որ վստահաբար պիտի քայլեն նոյն ճամբով:

Յուշատախտակի տուեութենէն ետք սրտի խօսքով հանդէս եկաւ օրուան մեծարեալը՝ Տիգրան Սարաֆեան, որ զգացուած իրեն մատուցուած այս մեծարանքի հանդիսութենէն, իր խորին շնորհակալութիւնը եւ երախտագիտութիւնը յայտնեց իր հետ աշխատակցած եւ միութեան նոյն քան օգտակար հանդիսացած վեթերաններուն եւ ընկերներուն, որոնցմէ շատեր արդէն իսկ ներկայ էին սրահին մէջ: Ապա մեծարեալը ներկայներուն ներկայացուց իր հարուստ կեանքէն դրուագներ եւ դէպքեր, որոնք ընդմիջող դրոշմուած են իր յիշողութեան մէջ, որոնցմով ինք մշտապէս կ'ապրի եւ տակաւին կը գործէ, չդադրեցնելով միութենական նուիրեալի մը իր անշահախնդիր եւ ազնիւ աշխատանքները:

Ձեռնարկի աւարտին մեծարեալը շնորհակալութիւններ ընդունեց ներկայներէն:



LIVE
8am - 8pm PST*
*San Francisco 8am - 7pm PST

ԴԵՊՐԻ ԱՐՑԱԽ
EN ROUTE ARTSAKH

Scan Below
and Donate
\$10!



CITY-STATE-REGION	STATION	DIGITAL CHANNEL	CABLE CHANNEL	SATELLITE	TIME
Northern California Sacramento	KSAO 49	49.1	Comcast Channel 194 AT&T U-verse Channel 4		8am to 8pm PST
San Francisco Bay Area San Francisco, Oakland, San Jose, Berkeley, and others.	KTSF 26	26.1	Comcast Channel 8, 21 or 26 Charter Channel 8 or 98 AT&T U-verse Channel 8 Google Fiber Channel 8	DirecTV 26 or 893 DISH 26 or 8237	8am to 7pm PST
Central California Fresno & Mid-State	KGMC 43	43.1	Comcast Channel 10 AT&T U-verse Channel 43	DirecTV 43 DISH 43	8am to 8pm PST
Southern California Greater Los Angeles Area	KSCI 18	18.1	AT&T U-verse Channel 18 Verizon FiOS Channel 18 Major Cable Systems Channel 18	DirecTV 18 DISH 18	8am to 8pm PST

For all other locations please tune in to our **LIVE WEBCAST** at www.ArmeniaFund.org

Text **ARMENIA** to **50555** to give **\$10** to Armenia Fund Inc. Reply with **YES** to confirm your donation.

\$10.00 donation to Armenia Fund Inc. Charges will appear on your wireless bill, or be deducted from your prepaid balance. All purchases must be authorized by account holder. Must be 18 years of age or have parental permission to participate. Message and Data Rates May Apply. Text **STOP** to **50555** to **STOP**. Text **HELP** to **50555** for **HELP**. Full Terms: mGive.org/T. Privacy Policy: mGive.org/P

Visit & Donate: www.armeniasfund.org or Call: 1-800-888-8897